Ազգ
Azg
15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 231(4611)
ISSN: 1829-1651

# «Սեփական ժողովրդին «ցեղասպանությամբ օժտելը» ոչ հայրենասիրություն է եւ ոչ էլ դիվանագիտություն»

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին կոնվենցիայի նախապատմությունն առնչվում է հայ ժողովրդի ամենաողբերգական էջին: Հայոց ցեղասպանության դատապարտման եւ հետեւանքների վերացման բացակայությունն էր, որ 1921թ.-ին պատճառ դարձավ երիտասարդ բանասեր Ռաֆայել Լեմկինին հարցնելու իր պրոֆեսորին, թե ինչո՞ւ հայերը չեն դիմում Հայոց եղեռնի կազմակերպիչներին ձերբակալելու համար: Այս հարցին ի պատասխան պրոֆեսորն ասում է, որ որեւէ օրենք չկա, որի շրջանակներում հնարավոր լիներ նրանց ձերբակալել: Հենց այս պատասխանն է ստիպում Լեմկինին թողնել բանասիրությունը եւ ընկղմվել միջազգային իրավունքի մեջ՝ նվիրվելով մարդկության դեմ հանցագործությունների ուսումնասիրմանը, որն էլ, ի թիվս այլոց, ճանապարհ է հարթում 1948 թ. կոնվենցիայի ընդունման համար:




Այս հիշեցմամբ երեկ Երեւանում մեկնարկած եւ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունմանը նվիրված «Ցեղասպանության հանցագործությունը. կանխարգելում, դատապարտում եւ հետեւանքների վերացում» խորագրով միջազգային գիտաժողովում ելույթ ունեցավ Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը**: Նշելով, որ հաջորդած 60 տարիներին չկանխվեցին ողբերգությունները Կամբոջայում, Ռուանդայում, Դարֆուրում եւ այլուր, Նալբանդյանն ընդգծեց, որ դրանով իսկ ի ցույց դրվեց, որ զուտ բարի կամքը բավարար չէ արմատախիլ անելու ցեղասպանություն ծնող այնպիսի դրսեւորումներ, ինչպիսիք են ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական հողի վրա սերմանվող ատելությունն ու թշնամանքը:

*Տես էջ 3*

# «Հայաստանը կկարողանա՞ ճանաչել Ղարաբաղի անկախությունը»

*«Ժառանգության» օրինագծի ձախողման թուրք-ադրբեջանական արշավանքը*

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

ԵԱՀԿ-ի Աստանայում հրավիրված գագաթաժողովից հետո «Ժառանգության» կուսակցության նախաձեռնությամբ Հայաստանում վերստին աշխուժորեն քննարկվեց դեռեւս 1991-ի սեպտեմբերի 2-ին անկախության հռչակած Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչելու հարցը: Ինչ խոսք, սա նուրբ հարց է, քննարկումներում զգուշություն եւ սառնասրտություն էր ենթադրում, որպեսզի զերծ մնա ավելորդ չարչրկումներից:

Փոխադարձ մեղադրանքները, սակայն, հանգեցրին ոչ միայն հարցի չարչրկմանը, այլեւ անտեղի շահարկմանը: Դրա թերեւս ամենավառ օրինակը «Ժառանգություն» կուսակցության նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանին հասցեագրված մեղադրանքներն էին, թե ինքը ինչո՞ւ ԼՂՀ ճանաչման հարցը չէր բարձրացնում, երբ ՀՀ արտգործնախարարի պաշտոնում էր: Արդարությունը պահանջում է ասել, որ 1992-ին որպես արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը հենց ՀՀ ազգային ժողովում բարձրացրել է ճանաչման հարցը, նույնիսկ նշել է լատինամերիկյան մի քանի քանի երկրների անունը, որոնք Արգենտինայի գլխավորությամբ ճանաչելու պատրաստակամություն էին դրսեւորել, բայց ապարդյուն:

Համենայն դեպս, դեկտեմբերի 9-ին ՀՀ ԱԺ-ում քվորումի բացակայությամբ հերթական անգամ տապալվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչելու վերաբերյալ «Ժառանգություն» խմբակցության օրինագիծը, որի օգտին քվեարկել էին ընդամենը 13 պատգամավորներ, որոնց թվում՝ Հայ հեղափոխական դաշնակցության՝ նիստին ներկա անդամները:

*Տես էջ 8*

# Մանեժնայա հրապարակում հայ պատանիներ են տուժել

Երբ ռուսաստանաբնակ հայազգի պատանիներ Գագիկն ու Ռուբենը իրենց ռուս, վրացի ու ադրբեջանցի ընկերների հետ Մոսկվայի կենտրոնում գտնվող Մանեժնայա հրապարակին կից սրճարանում դեկտեմբերի 11-ին նշելով Գագիկը ծննդյան օրը՝ դուրս եկան սրճարանից, նրանց վրա հարձակվեց ծայրահեղականների ամբոխը: Այս մասին հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը: Երեկվա համարում «**Ազգը**» տեղեկացրեց, որ դեկտեմբերի 11-ին Մոսկվայի Մանեժնայա հրապարակում ազգայնամոլ ծայրահեղականները «Ռուսաստանը՝ ռուսներին, Մոսկվան՝ մոսկվացիներին» եւ այլ կարգախոսներով կազմակերպել են մասսայական անկարգություններ, որոնց արձագանքել են ՌԴ ղեկավար պաշտոնյաները: Նախագահ Մեդվեդեւը վստահեցրել էր, որ, առանց կասկածի, բոլոր մեղավորները պատժվելու են: Ինչ վերաբերում է կոնկրետ հայազգի պատանիներին, ապա նրանց ամբոխից պաշտպանել է ոստիկանությունը: Ինչպես երեւում է YouTube կայքում, ինչպես նաեւ ռուսաստանյան դաշնային հեռուստաալիքներում տեղադրված տեսահոլովակներից, Գագիկն ու Ռուբենը թաքնվել են շտապ օգնության մեքենայի տակ: Ռուս ընկերները փորձել են պաշտպանել «թխամորթ» պատանիներին, սակայն, ամբոխը հարձակվել է նաեւ նրանց վրա: Այժմ երկու հայազգի պատանիները տանն են: Ինչպես տեղեկանում ենք «Ազատություն» ռադիոկայանից, Գագիկի վիճակը գնահատվում է որպես միջին ծանր. նա մի քանի շաբաթ կանցկացնի անկողնում, քանի որ վնասվածքներ ունի: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ ավելի ծանր է տղաների ադրբեջանցի ընկերոջ վիճակը, որին մեջքից դանակահարել են: Բացի երկու հայ պատանիներից, տուժել է նաեւ հայազգի Սերգեյ Գասպարյանը, որը «Սպարտակ» ֆուտբոլային ակումբի համակիր Եգոր Սվիրիդովի ընկերներից է: Նույն Սվիրիդովի, որի մահն էլ իբր թե ստիպել է ծայրահեղականորեն տրամադրված ամբոխին անկարգություններ կազմակերպել եւ «Ռուսաստանը մաքրել այլազգիներից»:

Հավելենք նաեւ, որ որոշ հյուսիսկովկասյան կայքերում, հատկապես անհաս բլոգերները կոչ են անում «վրեժխնդիր լինել ռուսներից»: Մասնավորապես, ըստ որոշ աղբյուրների, Մոսկվա են «գործուղվելու» ծայրահեղական տրամադրված երիտասարդներ Հյուսիսային Կովկասից: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանի կովկասյան համայնքների գլխավոր կազմակերպությունները, այդ թվում՝ Ռուսաստանի հայերի միությունը, կոչ են անում կովկասցիներին դուրս չգալ նման հանրահավաքների ու ավելորդ սրություն չհաղորդել միջադեպերին:

Ընդհանուր առմամբ, ըստ պաշտոնական տվյալների, Մանեժնայա հրապարակում տեղի ունեցած իրադարձություններից տուժել է 32 մարդ:

**Հ. ԱՓՅԱՆ**

# Ջուլիան Ասանժն ազատ է

Երեկ Լոնդոնի դատարանը որոշում է ընդունել WikiLeaks-ի հիմնադիր Ջուլիան Ասանժին, սեփական հայցադիմման համաձայն, ազատ արձակել գրավի դիմաց: Հիշեցնենք՝ Ասանժի դեմ մեղադրանք է հարուցված Շվեդիայում՝ սեռական բնույթի հանցագործություններ իրականացնելու հիմքով: Ջուլիանը հերքում է իրեն հասցեագրված բոլոր մեղադրանքները: Լոնդոնի դատարանի դատավոր Հովարդ Ռիդլին երեկ որոշում է կայացրել՝ «գրավի դիմաց, մինչեւ հաջորդ դատական նիստը, ազատել Ասանժին, սահմանելով նրա նկատմամբ, սակայն, որոշ սահմանափակումներ», տեղեկացնում է «ՌԻԱ Նովոստի»-ին:

# OpenLeaks-ը կդառնա WikiLeaks-ի այլընտրանքը

WikiLeaks-ի թիմի նախկին երկրորդ դեմքը՝ **Դենիել Դոմշայթ-Բերգը**, որը կայքից հեռացել էր հիմնադիր Ջուլիան Ասանժի հետ լուրջ տարաձայնությունների պատճառով, մտադիր է շուտով բացել սեփական կայքը, որը կոչվելու է OpenLeaks: Դրա տեխնոլոգիան այնպիսին է, որ ամեն մի ընկերության աշխատակից կկարողանա OpenLeaks-ի միջոցով անանուն կերպով սենսացիոն տեղեկություն հաղորդել հրատարակչին, որին ինքը կընտրի: Այսպիսով կլուծվի WikiLeaks-ի ճանապարհին ծառացած հիմնական խնդիրներից մեկը, նշում է BBC-ն:

Դոմշայթ-Բերգի կարծիքով, WikiLeaks-ը սկսել է զարգանալ սխալ ուղղությամբ: «Մեկ կազմակերպությունում կենտրոնացած են անչափ շատ իշխանություն, պատասխանատվություն եւ ռեսուրսային սահմանափակումներ», ասել է նա BBC-ի թղթակցին:

Ի տարբերություն WikiLeaks-ի, OpenLeaks-ը ինքը չի հրապարակի կամ ստուգի նյութերը, այդ դերը թողնելով մամուլին, ոչ կառավարական կազմակերպություններին, արհմիություններին եւ մյուս շահագրգիռ կողմերին:

OpenLeaks-ը միայն «կտրամադրի տեխնոլոգիաներ» ցանցային անանուն փոստարկղերի տեսքով: Դրա շնորհիվ կստեղծվի բաշխիչ ցանց, որը թույլ կտա պահպանել աղբյուրների գաղտնիությունը եւ փաստաթղթերի պահպանությունը:

Զգոն քաղաքացիները կարող են վավերագրերը վերահասցեագրել կամակերպության կայքին, որտեղ դրանցից կօգտվեն որոշակի ժամկետում: «Եթե այդ ժամկետից հետո նրանք չուզենան ինքնուրույն հրապարակել փաստաթղթերը, այդ նյութերը մատչելի կդառնան համակարգի մյուս բաժանորդներին», պարզաբանել է Դոմշայթ-Բերգը:

# Կվերանայվի «Ոստիկանության մասին» օրենքը

ԱԺ արտահերթ նիստի ժամանակ առաջին ընթերցմամբ պատգամավորները վերանայել են «Ոստիկանության մասին» օրենքի ուղղումների նախագիծը, որը որոշում է իրավապահ մարմինների հատուկ միջոցների գործադրման կարգը:

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ **Արթուր Օսիկյանի** փոխանցմամբ՝ ուղղումների միջոցով հաստատվում է, որ իրավակարգի ժամանակ ոստիկաններն էթիկայի կանոններով են առաջնորդվում, հստակ որոշվում են ոստիկանների կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ զենք գործադրելու դեպքերը:

«Ուղղումներում նշվում է, որ հատուկ միջոցները ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված եւ օրենքով նախատեսված տեխնիկական միջոցները (սարքերը, սարքավորումները, առարկաները, նյութերը) կամ ծառայողական շները, որոնց հիմնական նշանակությունը մարդկանց նկատմամբ անմիջական ֆիզիկական, հոգեբանական կամ նյութական օբյեկտների նկատմամբ անմիջական ֆիզիկական ներգործությունն է», ասաց նա:

Օսիկյանը շեշտեց, որ ըստ օրինագծի հաստատվում է ոստիկանության պարտականությունը՝ հատուկ միջոցների պահպանման պայմանների, դրանց ժամկետի պիտանելիության ստուգումը:

Որոշ տվյալներով 2008-ի մարտի 1-2-ին Երեւանում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ժամանակ զոհվածների մահվան հիմնական պատճառ են դարձել «Չերյոմուխա» ժամկետանց գազային նռնակները:

Օսիկյանի ներկայացմամբ՝ արգելվում է նաեւ հատուկ միջոցների գործադրումը, նաեւ՝ շների, որոնք կարող են քաղաքացիների կյանքին եւ առողջությանը լուրջ վնաս պատճառել եւ վտանգավոր են մարդկանց համար:

**Հ. Հ.**

Եթե ԱՊՊԱ, ապա ԻՆԳՈ

ԱՊՊԱ պայմանագրեր ձեռք բերելու
ժամկետի ավարտին մնացել է 16 օր:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:

✔ ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8
✔ ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38
✔ ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20 հասցեներով:
▼ www. ingoarmenia.am կայքում
▼ 010-59-21-21 թեժ գծով:
▼ Telcell տերմինալների միջոցով

Ինչպես նաեւ գործում է ԱՆՎՃԱՐ առաքում:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
Մենք վճարում ենք: Մի՛շտ*

** համաձայն ապահովագրության պայմանագրի եւ պայմանների:*

# Չվտանգել հայոց լեզվի գոյությունը

## *Դաշնակցությունը բոյկոտեց ԱԺ արտահերթ նստաշրջանը*

ԱԺ արտահերթ նստաշրջանի հերթական նիստը սկսվեց խորհրդարանական ընդդիմության՝ «Դաշնակցություն» եւ «Ժառանգություն» խմբակցությունների բոյկոտով: Նրանք հրաժարվում էին կառավարության ներկայացրած օրինագծերը քննարկել արագ ռեժիմով:

Պատգամավորներն այս մոտեցումը հիմնավորեցին այն փաստով, որ մի քանի օրում անհնար է քննարկել եւ ընդունել մի քանի տասնյակ օրինագծեր:

ՀՅԴ խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանի** գնահատմամբ՝ մեկ տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքը փորձում են հիմա «սղացնել»:

«Այս ոճը չենք ընդունում: Ընդ որում, այնտեղ կարող են լինել նաեւ օրենքներ, որոնց մենք կողմ կքվեարկեինք, ինչը չենք անելու: Չենք անելու հետեւյալ պատճառով՝ առաջին, երկրորդ, երրորդ ընթերցումների արանքում այնքան կարճ ժամանակ է դրված, որ պարզ է դառնում՝ ո՛չ պատգամավորը կհասցնի ծանոթանալ օրենքին, ո՛չ էլ կհասցնի առաջարկություններ անել»:

Հովհաննիսյանի գնահատմամբ՝ ժամանակն այնքան քիչ է, որ կառավարությունն անգամ չի հասցնի քննարկել իրենց առաջարկությունները:

«Մենք այս արտահերթ նստաշրջանի օրակարգին չենք մասնակցելու՝ ոչ քննարկմանը, ոչ քվեարկությանը: Դա աշխատաոճին է վերաբերում, ոչ թե օրենքների բովանդակությանը, որը նույնպես անպայման այլանդակություն է, բայց հիմա ես դրա մասին չեմ ցանկանում խոսել, որովհետեւ չեմ էլ հասցրել կարդալ», ասաց Հովհաննիսյանը:

Դաշնակցական պատգամավորի հայտարարությանն արձագանքեց ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանը**՝ նշելով, որ թույլ չի տա որեւէ ինստիտուտի ոտնահարել պատգամավորների իրավունքները:

Հայտարարված 20 րոպե ընդմիջումից հետո կառավարության վարքագծից դժգոհություն հայտնեց «Ժառանգություն» խմբակցությունը: Խմբակցության ղեկավար **Ստեփան Սաֆարյանի** գնահատմամբ լեզվի, աղբահանության, կենսաթոշակային խնդիրներին վերաբերող նախագծերը հնարավոր չէ քննարկել նման պայմաններում:

Խորհրդարանի աշխատանքը վերականգնվեց միայն մի քանի անգամ 20 րոպե տեւող ընդմիջումներից հետո. ՀՅԴ-ն չմասնակցեց քննարկմանը:

«Համաձայն եմ, որ կան նման մի քանի օրենքներ, որոնք ներկայացված են արտահերթ նստաշրջանում, որ 3 ընթերցմամբ ընդունենք: Վարչապետի հետ խոսել ենք, քննարկել եւ մի քանի օրենքի մասին եկել համաձայնության, որ մեկ ընթերցում ենք անելու: Այնտեղ մնում է 2 օրենք, որոնք 3 ընթերցում պետք է անենք, որովհետեւ փաթեթում կան նախագծեր, որոնք գործելու են հունվարի մեկից», ասաց Հովիկ Աբրահամյանը:

Օրակարգում ընդգրկված 35 հարցերը կքննարկվեն այսօր: Օրակարգում ներառված է նաեւ «Լեզվի մասին» եւ «Հանրակրթության մասին» օրենքներում փոփոխությունների կատարելու օրինագիծը:




Երեկ «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» նախաձեռնության մի քանի տասնյակ ցուցարարներ կրկին ԱԺ մուտքի մոտ էին: Նախ ցուցարարները հավաքվեցին Հանրապետության հրապարակում եւ կառավարության շենքի դիմացից սկսեցին երթը՝ քայլելով դեպի Բաղրամյան փողոց:

«Կրթությունը՝ հայերեն», «Լեզվի հարցում ոչ մի զիջում», «Հայաստանում պետական լեզուն հայերենն է» հայտարարություններով ցուցապաստառներով նրանք դիմավորում էին խորհրդարան մտնող պատգամավորներին:

«Հայաստանի պետական լեզուն պետք է լինի հայերենը, որպեսզի միջազգայնագիտությունը, Հայաստանի ապագա ուժը միջազգային հարաբերություններում հիմնված լինի հայերենագիտության եւ հայաստանակենտրոն քաղաքակրթության, լեզվի, մշակույթի եւ քաղաքականության վրա», ասաց ԱԺ շտապող «Ժառանգություն» կուսակցության նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանը: Նախաձեռնության անդամները արդեն մի քանի նմանատիպ բողոքի ակցիաներ են կազմակերպում՝ պահանջելով պատգամավորներին դեմ քվեարկել օրինագծին եւ չվտանգել հայոց լեզվի գոյությունը:

Հ. Հ.

# «Մենք եւս աշխատելու ենք կեղծ դեղերի դեմ պայքարի ուղղությամբ»

Մի քանի բժշկական կազմակերպությունների եւ Հայաստանի դեղարտադրողների ու ներմուծողների (ԴԱՆ) միության միջեւ նոյեմբերի 5-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել: Նշված կազմակերպություններն են «Հայկական բժշկական ասոցիացիան», «Հայկական հոգեբուժական ասոցիացիան» եւ «Հայկական դեղագործական ասոցիացիան»:

Երեկ «Հենարան» ակումբում կազմակերպությունների նախագահներն ու ԴԱՆ միության տնօրեն Սամվել Զաքարյանը ներկայացրին համատեղ աշխատանքների ծրագիրը, որի նպատակն է կարգավորել դեղագործական ու բժշկական դաշտերը:

Սամվել Զաքարյանի կարծիքով՝ դեղագործության ոլորտում նկատելի առաջընթաց կա: Որ կառավարությունն ընդունել է GMP ստանդարտները (պատշաճ արտադրական գործունեությունը), Սամվել Զաքարյանը համարեց բավականին հաջող քայլ. «Վերջապես Հայաստանի դեղագործների համար էլ կսկսեն գործել եվրոպական ստանդարտները, եւ հայ դեղագործները կունենան սերտիֆիկատ, որով կկարողանան ներկայանալ տարբեր երկրներում»: ԱՊՀ գրեթե բոլոր երկրներ Հայաստանից դեղորայք արդեն արտահանվում է, թե կոնկրետ ո՞ր դեղերն են արտահանվում՝ «Հայկական դեղագործական ասոցիացիայի» նախագահ Ղուկաս Ուլիխանյանը անուններ չնշեց. «Արտահանվում են հեղուկներ, հոգեմետ դեղեր, հաբեր եւ սրվակներով դեղորայք»:

Այնուհետեւ բանախոսներն անդրադարձան իրենց համատեղ ծրագրերին: «Հայկական հոգեբուժական ասոցիացիայի» նախագահ Արմեն Սողոյանի փոխանցմամբ՝ ապրիլին Երեւանում համաշխարհային հոգեբուժական ասոցիացիայի տարածաշրջանային գիտաժողով է անցկացվելու. «Բացի դրանից՝ կարեւոր է, որ դեղագործական ու բժշկական կազմակերպությունները կարողանան ճիշտ համագործակցել տարբեր բացասական երեւույթներից խուսափելու համար»:

Բանախոսները նշեցին, որ նախատեսվում է կազմակերպել համատեղ համաժողովներ, գիտաժողովներ, սեմինարներ ու քննարկումներ, ինչպես նաեւ մշակել ու իրականացնել կեղծ դեղերի շրջանառության ու առողջապահության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի տարեկան ծրագիր: «Կեղծ դեղերի դեմ պայքարն այսօր աշխարհում մեծ խնդիր է, մենք եւս աշխատելու ենք կեղծ դեղերի դեմ պայքարի ուղղությամբ», ասաց Ղուկաս Ուլիխանյանը եւ այս հարցում կարեւորեց սպառողների տեղեկացվածության մակարդակը: Սպառողը պետք է կարողանա տարբերել կեղծ դեղն իրականից եւ իմանա, թե Հայաստանում ո՞ր դեղորայքն է գրանցված:

Ղուկաս Ուլիխանյանը ավելացրեց, որ բժիշկն էլ կարող է նշանակել չգրանցված դեղորայք, քանի որ բժիշկն էլ իրազեկ չէ, թե Հայաստանում ո՞ր դեղերն են գրանցված: Դեղագործական ասոցիացիայի նախագահի կարծիքով՝ ընդհանրապես կեղծում են այն դեղերը, որոնց շրջանառությունն ավելի մեծ է, եւ դրանք ներկրվում են Հայաստան արտերկրից, ոչ թե Հայաստանում են կեղծվում: Բացի ճանաչողական քարոզարշավից՝ այս 4 կազմակերպությունները նախատեսում են նաեւ մոնիտորինգ անցկացնել կեղծ դեղերը հայտնաբերելու նպատակով:

Այնուամենայնիվ, Ղուկաս Ուլիխանյանն ասում է, որ կեղծ դեղերի շրջանառության առումով Հայաստանը ԱՊՀ մյուս երկրների համեմատությամբ ավելի լավ վիճակում է. «Ներկայումս մինչեւ 5-6 տոկոսի էլ չի կարող հասնել կեղծ դեղերի շրջանառությունը»: Սամվել Զաքարյանն ավելի կոնկրետ տվյալներ տրամադրեց. «Կեղծ դեղերի շրջանառությունն օգոստոս ամսին կազմում էր 1,5 տոկոս»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Հայաստանում հաշվառված է 82.900 գործազուրկ

## *Նրանց 70.1 տոկոսը՝ կանայք*

**Նախորդ եռամսյակի համեմատ գործազրկության ցուցանիշը նվազել է 0.4 տոկոսով եւ դեկտեմբերի տվյալներով գործազրկության մակարդակը կազմում է 6.9 տոկոս:**

**Գործազրկության մակարդակը Սյունիքում կազմել է 10.1 տոկոս, Լոռիում՝ 11.1, Տավուշում՝ 8.7, Շիրակում՝ 9.6, Կոտայքում՝ 9.3, Երեւանում՝ 8.1:**

**Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է աշխատանք փնտրողների թիվը, այժմ նրանց թիվը կազմում է 95.500: Նվազել է նաեւ գործազուրկների թիվը: Հայաստանում հաշվառվել է 82.900 գործազուրկ: Նվազման պարագայում էլ թիվը մտահոգիչ է: Ներկայացրած տվյալները Զբաղվածության ծառայության պետական գործակալության պետ Սոնա Հարությունյանինն են, մտահոգությունը՝ նույնպես:**

**Անցյալ տարի հունվարին գործակալությունը գրանցել է գործազրկության 7.3 տոկոս մակարդակ: «Ապրիլմայիսին ունեցանք գործազրկության մակարդակի կայունացում, դեկտեմբերին գրանցվել է գործազրկության 6.9 տոկոս: Շարունակում է մեծ թիվ կազմել գործազուրկ կանանց թիվը. գործազուրկների 70.1 տոկոսը կանայք են», ասաց Սոնա Հարությունյանը «Դե ֆակտո» ակումբում:**

**Հանրապետությունում գրանցվել են բժիշկների, ճարտարագետ տեխնոլոգների, բուժքույրերի, հաշվապահների, գանձապահների, դասավանդողների, մենեջերների, շուկայագետների, խոհարարների, պահածոյագործների, վարորդների, դերձակների, գործակալների, վաճառողների, վարսահարդարների, մասնահարդարների, դիմահարդարների, էլեկտրիկների եւ այլ մասնագիտություններով թափուր աշխատատեղեր:**

**Եթե մայրաքաղաքում բժիշկները գործազուրկ են, ապա մարզերում այդ մասնագիտությունն ամենապահանջվածներից է: Մարզերում կա բժշկի 267, բուժքույրի շուրջ 3.000 թափուր աշխատատեղ: Գործակալությունում տեղի ունեցած հանդիպումից հետո 68 գործազուրկ բժշկից միայն 3-ն են ընդունել մարզում աշխատելու առաջարկությունը:**

**Սոնա Հարությունյանի բնորոշմամբ՝ փաստն անհանգստացնող է. բացի նրանից, որ դժվարությամբ ստեղծված աշխատատեղերը չեն լրացվում, տվյալ շրջանի բնակչությունը չի ստանում կենսականորեն անհրաժեշտ ծառայություն:**

**Խնդիրը լուծելու նպատակով գործակալությունն առաջարկել է օրենսդրական փոփոխություններ իրականացնել, որպեսզի մարզերի աշակերտները բուհ ընդունվեն առանց մրցակցության, սակայն պայմանով, որ ուսման ավարտից հետո նրանք պետք է աշխատեն իրենց բնակավայրում:**

**Այս տարվա 11 ամսվա ընթացքում աշխատաշուկայի ցուցանիշները առաջարկի եւ պահանջարկի մասով**



**դինամիկ դրական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել են թափուր աշխատատեղերը: Գործակալության մասնագետները հայտնաբերել են 8.000 թափուր աշխատատեղ, նախորդ տարվա 6.600-ի փոխարեն:**

**Սոնա Հարությունյանի ներկայացմամբ՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ երկրում գործազրկության նպաստ ստանալու իրավունք ունի 20.467 գործազուրկ: Այս թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 21.4 տոկոսով, իսկ տարեսկզբի համեմատ՝ 22.7 տոկոսով: Գործակալության ջանքերով տարեսկզբից աշխատանքի է տեղավորվել 10 515 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 18.6 տոկոսով ավելի:**

**Վերջին 10 տարվա ընթացքում ամենացածր գործազրկության մակարդակը գրանցվել է 2009-ի հունվարի 1-ին: Գործազրկությունը մեղմելու նպատակով տարեսկզբից հանրապետությունում անցկացվել է 6 աշխատանքի տոնավաճառ. աշխատանքի է տեղավորվել 450 մարդ:**

**Հ. Հ.**

# Բժշկին ազատել են աշխատանքից

**Նոյեմբերի 30-ի «Եթե ուշադիր լինեեր, երեխաս չէր մահանա» հոդվածում «Ազգ» օրաթերթն անդրադարձել էր «Արմենիա» բժշկական կենտրոնում տեղի ունեցած ողբերգությանը, երբ 5 օրական նորածինը թթվածնային քաղցի պատճառով մահացել էր: Ծնողները երեխայի մահվան մեջ մեղադրում էին բժշկին:**

**«Մեր նպատակն է, որ նման դեպքեր այլեւս չկրկնվեն, որ ուրիշ ծնողները չապրեն այն, ինչ մենք ապրեցինք, որ բժշկի սխալի պատճառով ուրիշ փոքրիկներ չմահանան», ասել էր փոքրիկի մայրը՝ Ծովինար Աբգարյանը:**

**ՀՀ առողջապահության նախարար Հարություն Քուշկյանի հանձնարարությամբ ստեղծվել էր հանձնաժողով, որը քննել է գործը:**

**«Գործի քննության ավարտին նախարարը հանձնարարական է տվել «Արմենիա» բժշկական կենտրոնի գլխավոր բժիշկ Ռազմիկ Աբրահամյանին՝ աշխատանքից ազատել նույն հիվանդանոցի բժիշկ Դավիթ Աբրահամյանին՝ մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար», «Ազգի» հետ զրույցում ասաց փոքրիկի հայրը՝ Ալբերտ Աբգարյանը:**

**Ծնողները դիմել են ոստիկանություն, գործը քննում է ոստիկանության Մաշտոցի շրջանի բաժանմունքը: Բժշկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով՝ երբ բժշկական օգնություն իրականացնողը թերացել է, եւ անզգուշության հետեւանքով հիվանդը մահացել է:**

**Հ. Հ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Իրադարձային

# Ցեղասպանությունը` «սեր ուրիշների մահվան հանդեպ»

### *Միջազգային գիտաժողով` ՄԱԿ-ի կոնվենցիայի համատեքստում*



*Վահիլ Նիկոլաս Կեյր եւ Իսրայել Չառնի*



*Թաներ Աքչամ*



*Լեանդրո Դեսպուի*

Յուրաքանչյուր ցեղասպանություն հոլոքոստ է, բայց Իսրայելը, նաեւ Միացյալ Նահանգներն ամոթալիորեն չեն ճանաչում Հայոց ցեղասպանությունը: Հրեա, ցեղասպանագետ **Իսրայել Չառնիի** ելույթը «Ցեղասպանության հանցագործությունը. կանխարգելում, դատապարտում եւ հետեւանքների վերացում» թեմայով միջազգային գիտաժողովում, որ մեկնարկեց երեկ Երեւանում, հիմնականում մի քանի առաջարկ էր ներկայացնում:

Չառնիի խոսքով, որ ներկայացվեց գիտաժողովի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին 1948թ. կոնվենցիայի մշակման եւ ընդունման շարժառիթները եւ նպատակները» նիստում, ամենից առաջ առաջարկում է ընդունել, որ ցեղասպանությունները համազոհեր են ունենում, ինչպես դա եղել է Հոլոքոսթի, Հայոց ցեղասպանության եւ այլ ողբերգությունների ժամանակ: «Նույնիսկ քրդերը, որոնց ատելությամբ ենք հիշում որպես սպանություն իրագործողների, նույնպես ենթարկվել են բռնությունների եւ համազոհ են», նշեց Իսրայել Չառնին: Նույն կերպ հրեաները, որպես հոլոքոսթյան ժամանակահատվածի համազոհերի, չեն ճանաչում գնչուներին, անգամ Խորհրդային Միության 2 մլն-ից ավելի ռազմագերիներին, որ նույնպես սպանվել են գազային սենյակներում:

Հրեա գիտնականը առաջարկում է նաեւ աշխարհին լավ ներկայացնել Ցեղասպանության իմաստը, ներկայացնել որպես ֆաշիզմ, հետապնդում, խոշտանգում, որպես` «սեր ուրիշների մահվան նկատմամբ»: Ընդ որում, Հայոց ցեղասպանությունն, ըստ գիտնականի, «հարձակում էր կյանքի դեմ, ջիհադի կոչ էր մուսուլմաններին»:

Այդուհանդերձ, ըստ Իսրայել Չառնիի, կարելի է մարդկանց հասցնել ցեղասպանության հանցագործության դատապարտելիության կարեւորությունը, հասնել նրան, որ մարդիկ թույլ չտան նոր ցեղասպանություններ:

Նույն նիստի եւս մեկ զեկուցողի` Լիբանանից ժամանած Վահիլ Նիկոլաս Կեյրի խոսքերով, հանցագործության այս պարագայում կարեւոր է նաեւ կրթությունը: Ցեղասպանությունն, ըստ Կեյրի, մարդկանց իրագործած հանցագործություն է, ուստի խնդիրը նաեւ այդ մարդկանց ճիշտ կրթությունն է: Եվ այն դեպքում, երբ մարդիկ, տարբեր լինելով, մնում են նույն իմաստը կրողը` մնում են մարդ, ինչպես է, որ մեկ ժողովուրդն իրեն թույլ է տալիս սպանել մյուսին:

Թուրք մտավորական **Թաներ Աքչամի** խոսքերով, Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը չճանաչելը քաղաքական բնույթ է կրում, մինչդեռ առանց պատմական խնդիրները լուծելու` Թուրքիան չի կարող ժողովրդավարություն կառուցել: Եվ այս դիրքորոշումը միայն Աքչամինը չէ, բայց Թուրքիան իր պատմության հանդեպ ժխտողական վերաբերմունքը փոխել չի շտապում: Այդուհանդերձ, Աքչամը հույս է հայտնում, թե Թուրքիան շուտով կանի դա, ինչը կամաց-կամաց տեղի է ունենում: Աքչամը այդ հնարավոր փոփոխության վկայություն է համարում եկեղեցիների նկատմամբ վերջերս իրականացված քաղաքականությունը, որի առնչությամբ, սակայն, Հայաստանում այլ գնահատականներ են հնչում:

Գերմանացի գիտնական, իրավապաշտպան **Թեսսա Հոֆմանն** էլ գտնում է, որ եթե Հայաստանը ցանկանա, կարող է հայկական ցեղասպանության հարցը Արդարադատության միջազգային դատարանի քննարկման առարկա դարձնել: «Սպանություն, ուծացում, ոչնչացում. այս ամենն առկա է Օսմանյան կայսրության կազմակերպած գործողություններում: «Սառը ցեղասպանության» գործերը եւս կարող են ներկայացվել Հաագայի միջազգային դատարանում», նշեց Հոֆմանը:

Խոսելով Գերմանիայում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված գործընթացի մասին, Թեսսա Հոֆմանն ասաց, որ դեռ 2005 թվականից գերմանական խորհրդարանում կան երեք միջնորդություններ հայկական ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, սակայն դրանք ընթացք չեն ունեցել: Գերմանացի գիտնականի բացատրությամբ, Հայոց ցեղասպանությունը ժխտելու Գերմանիայի մոտեցման հիմքում իրենք իրենց «համապատասխանասու» համարելու հանգամանքն է:

Արգենտինացի գիտնական Լեանդրո **Դեսպուիի** խոսքով, միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը կնպաստի ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը:

«Հայոց ցեղասպանության ճանաչմամբ խաղաղություն կհաստատվի տարածաշրջանում: Բացի այդ` հող կնախապատրաստվի նաեւ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման համար` հաշվի առնելով Ադրբեջանի կողմից ներկայացվող սպառնալիքները», ասաց նա: Նշենք, որ Լեանդրո Դեսպուին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում ներդրած նշանակալի ավանդի համար նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով պարգեւատրվել է Մխիթար Գոշի մեդալով:

«Այս պարգեւը Ձեզ հանձնելը եղել է մեր ժողովրդի ցանկությունը, եւ ես կատարել եմ այն: Մենք երախտապարտ ենք Ձեզ, Ձեր պետությանն ու ժողովրդին` մեր ցավը հասկանալու, ցեղասպանությունից փրկված մեր հայրենակիցների համար Արգենտինայում ապրելու եւ արարելու բարենպաստ պայմաններ ապահովելու համար», պարգեւի հանձնման արարողությանը ասել է նախագահ Սարգսյանը:

Դեսպուին շնորհակալություն հայտնելով պարգեւի համար` ընդգծել է, որ կիսելով հայ ժողովրդի ցավն ու անընդունելի համարելով ժխտողականությունը, որոշել էր պայքարել արդարության ու ճշմարտության համար եւ տարիներ ի վեր զբաղված է այդ կարեւորագույն խնդրով:

Գիտաժողովին մասնակցում են շուրջ 20 երկրից Հայաստան ժամանած բազմաթիվ գիտնականներ, այդ թվում` ցեղասպանագիտության բնագավառի ճանաչված հեղինակություններ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Սեփական ժողովրդին «ցեղասպանությամբ օժտելը» ոչ հայրենասիրություն է եւ ոչ էլ դիվանագիտություն»

*1-ին էջից*

«Իհարկե, միջազգային հանրությունը որոշ առաջընթաց գրանցել է այս ուղղությամբ Հռոմի ստատուտի ընդունմամբ եւ Ռուանդայի եւ Հարավսլավիայի տրիբունալների ստեղծմամբ», ասաց նախարարը, ավելացնելով, որ «անկախ աշխարհաքաղաքական կամ այլ շահերից` միջազգային հանրությունը պետք է միասնական լինի ցեղասպանության դատապարտման, կանխարգելման գործում: Այս միասնականության բացակայության հետեւանքով է, որ մարդկությունն ականատես է դառնում ցեղասպանության իրականացման նոր փորձերի»:

Գիտաժողովին մասնակցելու համար շուրջ 20 երկրներից ժամանած հեղինակավոր գիտնականներին եւ փորձագետներին ողջունեց նաեւ Հայաստանի նախագահը:

«Հայոց ցեղասպանության դառը դասերը մարդկության պատմության ու հիշողության մեջ չմնացին որպես անցյալի լոկ հուշեր. դրանց լրացնելու եկան Հոլոքոսթի սարսափները, Ռուանդայի, Դարֆուրի եւ բազմաթիվ այլ ողբերգություններ: Ցավոք, ժխտողականությունն ու ցեղասպանության ուրացումը դեռեւս շարունակում են տեղ գտնել աշխարհում», նշեց նախագահ Սերժ Սարգսյանը:

Նրա խոսքերով, պաշտոնական պատմագրությամբ, գիտականորեն ապացուցված եւ միջազգային հանրության համապատասխան գնահատականին արժանացած պատմական փաստերը վերանայելուն միտված քայլերին զուգընթաց որոշ պետություններ փորձում են արհեստականորեն ստեղծել «սեփական ցեղասպանության» պատմություններ: «Չանդրադառնալով նման երեւույթի առաջացման տարբեր դրդապատճառներին` միայն մեկ բան կցանկանայի նշել. սեփական ժողովրդին, այսպես ասած, «ցեղասպանությամբ օժտելը» ոչ հայրենասիրություն է եւ ոչ էլ դիվանագիտություն», ասաց Սերժ Սարգսյանը:

Ըստ Հայաստանի նախագահի խոսքի` «Կոծկել սեփական մեղքը եւ կատարած հանցագործությունը` նշանակում է կատարել նոր հանցագործություն»: Ավելին, այս ցինիզմը գալիս է ապացուցելու, որ ոմանք իսկապես չեն ըմբռնում կամ չեն ուզում հասկանալ այն ահավոր գինը, որը մարդկությունը վճարել եւ դեռեւս շարունակում է վճարել»:

Ցեղասպանությունների սկզբնակետն, ըստ Սերժ Սարգսյանի, անհանդուրժողականությունն ու այլատյացությունն է: «Ավելին, ինչ-ինչ պատճառներով պետական մակարդակով նման քաղաքականության որդեգրումը եւ անհանդուրժողականության ու այլատյացության քարոզումը, այդ թվում նաեւ քաղաքական էլիտայի առաջին դեմքերի անմիջական մասնակցությամբ եւ ուղղորդմամբ, իրական վտանգ են ստեղծում ու պարարտ հող նախապատրաստում նոր դժբախտությունների ու ցեղասպանական գործողությունների համար»:

Մեծ եղեռնը յուրաքանչյուր հայ ընտանիքի դուռը թակած անհատական եւ մեր ժողովրդի հավաքական ցավն է, ողբերգությունն ու հիշողությունը: Հայաստանի նախագահը վստահություն հայտնեց, որ «ճանաչումից դեպի ներողամտություն, արդարությունից` խաղաղություն տանող հաշտության ուղին, հանդուրժողականությունն ու համակեցությունը այլընտրանք չունեն»:

## ԱՍՈՒԼԻՍ

# Կոմանդոս. Բանակցային բոլոր փուլերում պարտվել ենք

**Ղարաբաղյան հիմնախնդրի բանակցային գործընթացի ժամանակ հայկական կողմի ցանկությունը` տեսնել ազատ եւ անկախ Ղարաբաղ, որեւէ տեղ ֆիքսված չէ: Սա գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանի (Կոմանդոսի) տեսակետն է:**

**Ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանն ունենում է այն, ինչին ձգտում է, համանախագահներն էլ միշտ հանդես են գալիս Ադրբեջանի տարածքային ամբողջականության օգտին:**

**«Կարելի է ասել, որ Հայաստանը բանակցային բոլոր փուլերում պարտվել է», ասաց Կոմանդոսը «Արցախ» ակումբում:**

**Թեեւ Աստանայի գագաթաժողովում որեւէ արտասովոր զարգացում չեղավ, սակայն նախագահի ելույթում Կոմանդոսը վճռականություն է նկատել: «Կարելի է ասել` Հայաստանը նահանջից անցնում է հարձակողական դիրքորոշման»: Նրա գնահատմամբ` Ադրբեջանի ակնկալիքները գագաթաժողովից բազմաթիվ էին. հարեւան պետությունը ցանկանում էր զարգացնել իր հաջողությունները, սակայն Աստանայում որեւէ զարգացում տեղի չունեցավ: «Ադրբեջանը բավարարված չէ, իսկ մե՞նք: Մենք ոչինչ չունենք: Չունենք այնպիսի բնավորություն, որպեսզի իրականությունը ճիշտ ներկայացնենք, մինչդեռ Ադրբեջանը ՄԱԿ-ում շատ ուժեղ ներկայացուցչություն ունի»:**

**Ադրբեջանի հակահայ քարոզչությունը նա համարում է փուչիկ, որը կարող է հեշտությամբ պայթել հայ դիվանագետների լավ աշխատանքի եւ հայերի միասնականության պարագայում: Հակահայ քարոզչության դեմ պայքարելու համար Հայաստանը հիանալի բանակ ունի` հայկական սփյուռքը, սակայն նրա հետ աշխատանքն էլ թերի է: «Եթե ղարաբաղյան հիմնախնդրի լուծման հարցում հայերն իրենց ամբողջ ներուժն օգտագործեն, ԼՂՀ անկախության հաստատումը հաջողություն կունենա»:**

**Անդրադառնալով «Ժառանգություն» խմբակցության` «Հայաստանի կողմից ԼՂՀ անկախությունը ճանաչելու մասին» օրինագծին, որի քվեարկությունը խորհրդարանական մեծամասնությունը բոյկոտեց, եւ օրինագիծը չընդունվեց, Կոմանդոսն ասաց, որ պատրաստվում է հանդիպել «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների հետ եւ պարզել, թե ԼՂՀ անկախությունն ի՞նչ սահմաններով են նախատեսում ճանաչել:**

**«Եթե ճանաչումը ներկայիս սահմաններով պետք է ճանաչվի, ապա երկու ձեռքով կողմ եմ: Սակայն եթե ճանաչումը պետք է լինի մի քանի շրջան հանած` դեմ եմ»: Կոմանդոսի գնահատմամբ` ԱԺ մեծամասնությունը խնդրի վերաբերյալ միասնական հայեցակարգ չունի եւ սպասում է Սերժ Սարգսյանի արձագանքին:**

**«Եթե համապատասխան ցուցում լինի, ապա մեծամասնությունը գուցե անդրադառնա այդ հարցին», ասաց Կոմանդոսը` միաժամանակ ընդգծելով, որ ԼՂՀ ճանաչումը կարող է խնդիրներ առաջացնել միջազգային հանրության հետ եւ մեծացնել պատերազմի հավանականությունը:**

Հ. Հ.

# Հայաստանը` նախագծերի կառավարման բիզնեսի ներուժով

## *Պավել Բարսեղյանն առաջարկում է օգտագործել մարդկային գործոնը` նախագծերի կառավարման գործիքներ ստեղծելու նպատակով*

***Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պավել Բարսեղյանը եղել է Մերգելյան ինստիտուտի առաջին ցերեկային ասպիրանտը: 1972 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ համակարգիչների ավտոմատացված նախագծման բնագավառում: 1974 թ. հրավիրվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտ որպես ամբիոնի վարիչ: Պաշտպանել է դոկտորական թեզ 1990 թ. մասսայական կապերով մեծ համակարգերի մաթեմատիկական տեսության բնագավառում: Այդ տեսությունը ներկայումս լայնորեն կիրառվում է ինտերնետի, սոցիալական ցանցերի, ինչպես նաեւ նախագծային աշխատանքների պլանավորման համար: 1993թ. հրավիրվել է աշխատանքի ԱՄՆ, կիսահաղորդչային չիպերի նախագծման բնագավառի «Infinite Technology Corp» ընկերություն (Դալլաս, Տեխաս), որտեղ աշխատել է մինչեւ 1999թ.:***

***1998թ. հիմնադրել է «DAN technologies» ընկերությունը` կիսահաղորդչային չիպերի ավտոմատացված նախագծման բնագավառում: 1999թ. հրավիրվել է աշխատանքի Կալիֆոռնիայի նահանգ, կիսահաղորդչային չիպերի նախագծերի կառավարման «Numetrics Management Systems, Inc» ընկերությունում որպես գիտության եւ նոր տեխնոլոգիաների գծով փոխնախագահ: 2008թ. հիմնադրել է «Systemic Project Management» ընկերությունը Տեխասում, բնագավառը` նախագծերի կառավարման նոր տեսության եւ ծրագրային գործիքների ստեղծում: Ստեղծել է նախագծերի կառավարման եւ մարդկանց ամենօրյա գործունեության մաթեմատիկական տեսություն, որը հրատարակվել է ԱՄՆ-ում: Այս տեսությունը հիմնված է մարդու վարքը նկարագրող երեք աքսիոմաների վրա, ըստ որոնց մարդը իր գործունեությունը կազմակերպում է այնպես, որ այն պահանջի նվազագույն ջանք ու ռիսկ եւ իրեն պատճառի առավելագույն հաճույք:***

**- Պրն Բարսեղյան, ինչպե՞ս ստացվեց, որ հաջող աշխատանքային ճանապարհը Հայաստանից տեղափոխվեց Միացյալ Նահանգներ:**

- 1993-ին հրավիրվեցի ԱՄՆ` Տեխասի նահանգ, մի փոքր խմբով գնացինք չիպ դիզայնի բնագավառում աշխատելու: 1999 թվականին Դալլասից տեղափոխվեցի Կալիֆոռնիա, Սիլիկոնային հովիտ` որպես «Numetrics Management Systems, Inc» ընկերության փոխնախագահ գիտության եւ նոր տեխնոլոգիաների գծով: Տասներկու տարի աշխատելով «Numetrics Management Systems, Inc» ընկերությունում` մի քանի անգամ փորձել եմ Հայաստանում այդ ընկերության մասնաճյուղ բացել: Վերջապես երկու տարի առաջ բացվել է բաժանմունք Երեւանում եւ հաջողությամբ գործում է: «Numetrics Management Systems, Inc» ընկերությունն իր տեսակի մեջ եզակի է, քանի որ ունի մեծ քանակությամբ վիճակագրական տվյալներ ամբողջ աշխարհում նախագծված չիպերի մասին: Այս բնագավառում կատարվող պրակտիկ աշխատանքը ինձ հնարավորություն տվեց կատարելու կարեւոր տեսական բնույթի ընդհանրացումներ եւ կառուցելու նախագծերի կառավարման մաթեմատիկական տեսություն:

Այս տարվա սկզբից դուրս եմ եկել «Numetrics Management Systems, Inc» ընկերությունից եւ հիմնել նոր ընկերություն` «SystemicPM»: Նախորդ տարվանից նաեւ սկսել եմ հոդվածաշար տպագրել Միացյալ Նահանգներում, որի նպատակն է նախագծերի կառավարման նոր տեսության մասսայականացումը եւ «SystemicPM» ընկերությունում ստեղծված ծրագրային գործիքների մարկետինգը:

**- Ո՞րն է նորարարությունը Ձեր աշխատանքում, ի՞նչ նոր բնագավառի մասին կարելի է նշել:**

- Վերջին մեկուկես տարում հրատարակել եմ տասնութ հոդված PM World Today ամերիկյան համացանցային հանդեսում: Դրանք հիմնականում վերաբերում են մարդու ամենօրյա աշխատանքային գործունեության մաթեմատիկական տեսությանը, որի հիման վրա էլ կառուցել եմ նախագծերի կառավարման քանակական մեթոդները: Դրանք հնարավորություն է տալիս հաշվարկելու նախագծային աշխատանքների ծավալը, տեւողությունը, դրա հետ կապված ռիսկերը եւ այլն:

Կատարված գիտական աշխատանքների մի այլ ուղղություն վերաբերում է մարդկանց աշխատանքային խմբերի արտադրողականության եւ կայունության հարցերին: Այս նպատակով օգտագործել եմ այսպես կոչված քաոսի տեսությունը` մոդելավորելու համար մարդկանց հարաբերությունների դինամիկան: Ըստ այս տեսության` մարդկանց կայուն համակեցությունը հնարավոր է ապահովել նրանց փոխադարձ ճնշումների եւ զիջումների պարբերական հաջորդականությամբ միայն:

Ավանդական ձեւով համարվում է, որ նախագծերի կառավարումը որակական որոշումների ոլորտ է, որտեղ մարդկանց փորձն ու ինտուիցիան ունեն վճռական դեր: Բայց երբ կատարվող գործի մասշտաբները մեծանում են, մշակման ենթակա ինֆորմացիայի ծավալների կտրուկ մեծացման պատճառով մարդն այլեւս ի վիճակի չէ արդյունավետ ղեկավարել նախագծային գործընթացը: Սրա արդյունքը լինում է այն, որ սկսված նախագծերի մի զգալի մասը այդպես էլ չի ավարտվում: Այսպես, եթե վերցնենք ՏՏ բնագավառը, ապա այստեղ համաշխարհային վիճակագրությամբ նախագծերի մինչեւ 30 տոկոսը այդպես էլ իր ավարտին չի հասնում: Դրա պատճառով միայն Հյուսիսային Ամերիկայում արդյունքի չհասած նախագծերի հետ կապված ֆինանսական կորուստի չափը տարեկան հասնում է մինչեւ 100 մլրդ ԱՄՆ դոլարի:



Այս հսկայական կորուստները մարդկանց ստիպում են մտածել, որ նման բարդ գործերը միայն որակական մեթոդներով ղեկավարելը բավարար չէ, պետք են ճշգրիտ քանակական օրենքներ` հաշվարկելու մարդկանց աշխատանքը: Նման կարգի պրոբլեմներ լուծելու համար ես օգտագործել եմ ֆիզիկայի մեթոդները` մարդկանց դիտելով որպես մոլեկուլներ, որոնք կարող են ղեկավարվել իրենցից անկախ օրինաչափություններով

**- Ինչպե՞ս եւ որքանո՞վ են Ձեր հրատարակումներում ներկայացված նոր գործիքները առնչվում Հայաստանին:**

- Հենց սկզբից միտք ունեի այս ամենը որեւէ ձեւով կապել Հայաստանի հետ, եւ ստեղծվեց «Numetrics Management Systems, Inc» ընկերության Հայաստանի բաժանմունքը, որը ներկայումս մեծ հաջողությամբ զբաղվում է չիպերի նախագծման գիտական մեթոդների մշակմամբ: Վերջին շրջանում ես ընդարձակել եմ գիտական հետազոտությունների սահմանները, եւ եղած հրատարակումները վերաբերում են ընդհանրապես մարդկային աշխատանքին եւ նախագծերի կառավարմանը` անկախ բնագավառից: Բացի այդ, տասներկու տարի աշխատելով այս միջավայրում` լավատեղյակ եմ այդ ոլորտի իրավիճակին եւ պարզ տեսնում եմ, որ այս բնագավառը ունի հսկայական ներուժ բիզնեսի իմաստով: Եվ սա եզակի բնագավառներից է, որ Հայաստանի ներսում հետազոտական կենտրոններ ստեղծելով` կարող ենք արտադրանքը հանել միջազգային շուկա:

Ներկայումս Հայաստանում իրենց գործունեությունը ծավալած արտասահմանյան ՏՏ ընկերությունները շատ մեծ եւ դրական դեր են կատարում, բայց եկամուտների իմաստով դրանք քիչ կապ ունեն Հայաստանի հետ: Հարցի լուծումն այն է, որ ստեղծվեն հայաստանյան ընկերություններ, որոնց արտադրանքը կգնահատվի միջազգային շուկայում: Այս իմաստով ես համոզված եմ, որ Հայաստանում համապատասխան վերաբերմունքի դեպքում նախագծերի կառավարման ոլորտում կարելի է լավ բիզնես ստեղծել: Դրա համար կան համարյա բոլոր նախադրյալները: Դրանք են` մեծ աշխատանքային փորձը ծրագրային գործիքների ստեղծման ոլորտում, շուկայի իմացությունը, բարձր մակարդակի գիտական հետազոտությունները, որոնք աշխարհի տարբեր անկյուններում մասնագետներից ստացել են բարձր գնահատական: Բավական է միայն նշել, որ PM World Today հանդեսը, որում հրատարակվել են իմ աշխատանքները, աշխարհում տարածվում է 12000-ից ավելի պաշտոնական հասցեներով:

**- Ինչպե՞ս եք պատկերացնում այդօրինակ ընկերության հիմնումը Հայաստանում, որքանո՞վ է դա իրատեսական:**

Նախ սկսենք նրանից, որ այս ուղղությամբ արտադրանքի սպառողները եւ պոտենցիալ ֆինանսավորողները ապրում եւ գործում են Հայաստանից դուրս: Դժվար է պատկերացնել, որ Հայաստանում որեւէ բիզնեսմեն ուզենա իր աշխատանքների գիտական կազմակերպման համար դրամ վճարել, քանի որ կան դրամ վաստակելու ավելի ուղղագիծ եւ կտրուկ միջոցներ:

Այս հարցին պետք է նայել մի փոքր այլ կտրվածքով` հաշվի առնելով վաճառվող ապրանքի ստեղծման ցիկլը ամբողջությամբ, ներառյալ գիտական հետազոտությունները, դրանց հիման վրա ծրագրային գործիքների ստեղծումը, կապը պոտենցիալ պատվիրատուների հետ, մարկետինգը եւ վաճառքը: Պատասխանելով տրված հարցին, պետք է ասեմ, որ իրատեսական է Հայաստանում իրականացնել գիտական հետազոտությունները եւ ծրագրային գործիքների ստեղծումը: Աշխատանքների մնացած մասերը կարող են իրականացվել դրսում: Իհարկե, շատ ավելի լավ կլիներ, եթե ֆինանսավորողների գոնե մի մասը լիներ Հայաստանից, բայց ավաղ, դրանից շատ ենք հեռու: Բոլորիս է քաջ հայտնի, որ Հայաստանում ներդրումները կատարվում են այնպիսի տեղերում, որտեղից թեկուզ եւ փոքր, բայց կայծակնային արագությամբ են ստացվում եկամուտները: Քանի որ Հայաստանում բիզնեսը հիմնականում այս տիպի է, դրա համար միջոցներ այստեղ դժվար է գտնել, մինչդեռ հենց բիզնեսի իմաստով այս բնագավառի արտադրանքը կարելի է համարել low hanging fruit, որը կնշանակի ցածր կախված, հեշտ մատչելի պտուղ: Հայաստանում նման բիզնեսի հիմնադրումը խնդիրներ ունի նաեւ գիտության մարդկանց եւ չինովնիկների հետ: Գիտության մարդիկ գրեթե անտեղյակ են, թե ինչ է կատարվում աշխարհում, չինովնիկներին էլ ոչինչ չի հետաքրքրում, բացի իրենց պարզունակ շահից, իսկ երկրի ղեկավարությունն էլ զբաղված է շատ ավելի դժվար գործերով` պետության կայացում, Ղարաբաղի հարց, տնտեսության խնդիր, օլիգարխներ, մարդկանց սոցիալական ապահովման խնդիր, գյուղատնտեսության անկում:

**- Այսօրինակ դժվարությունների կողքին կա՞ն արդյոք առավելություններ, որոնց դեպքում Հայաստանում նման գործի հիմնումը կարող է լինել նպատակահարմար:**

Հայաստանը այս գործում կարող է ամենից առաջ մասնակցել ուղեղներով եւ Սովետական ժամանակներից դեռեւս ինչ-որ ձեւով մնացած գիտական մտածողության մնացորդներով: Մասնավորապես այս գործի իրականացման համար պետք են ֆիզիկոսներ, եւ բարեբախտաբար այդ իմաստով ունենք մեծ պոտենցիալ: Նախագծերի կառավարման նոր տեսության ստեղծման ժամանակ ես օգտվել եմ տեսական ֆիզիկայի հարուստ մեթոդներից: Բացի դրանից, ամբողջ աշխարհում կան ֆինանսական միջոցներ տնօրինող հայեր, որոնք ուզում են Հայաստանում գործ ստեղծել, բայց գալով Հայաստան` բախվում են մի խնդրի, երբ որեւէ մեկը շահագրգռություն ցույց չի տալիս բիզնեսի զարգացման առումով, այլ մտածում են փող գրպանելու մասին միայն:

Իմ ցանկությունն այն է, որ կարողանամ ներդրումների պատրաստ մարդկանց Հայաստանում հանդիպեցնել իրենց նման մտածող մարդկանց: Դրսի հայ գործարարներից շատերը ուզում են ոչ թե օգնություն տրամադրել, այլ օգնել հայրենիքին` այստեղ նորմալ բիզնես հիմնելով: Բայց այստեղ նույն այդ գործարարներն ուզում են հանդիպել դատողությունների եւ մոտեցումների այն համակարգին, որին սովոր են, այլ ոչ թե կիսավայրենի մեթոդների, որոնց միակ նպատակը խաբելն է ու շորթելը:

**- Ինչպիսի՞ն է իշխանության արձագանքը, որքանո՞վ է Հայաստանը, ի դեմս տարբեր պաշտոնյաների, պատրաստ աջակցելու նման նախագծերին:**

Դեռեւս անցյալ տարի եմ հանդիպել Ներսես Երիցյանին, երկու խոսքով փոխանցեցի իմ գաղափարը, ասաց, որ առանց իրեն տեսնելու ԱՄՆ չվերադառնամ: Տվեց իր տվյալները, որպեսզի նամակ ուղարկեի հանդիպելու նպատակով: Մեկ նամակ չէ, որ ուղարկել եմ, այլ մի քանիսը, ու ցայսօր դեռ հանդիպում ենք: Ես շարունակում եմ որոնել: Վեց ամսից մեկ տարի է պետք, որ 5-10 հոգանոց մարդկային մի խումբ արդեն կատարված աշխատանքների հիման վրա ստեղծի վաճառվող արտադրանք: Ես պատրաստ եմ գաղափարը տասնյակ անգամներ ներկայացնելու, որ գտնվեն միջոցներ` Հայաստանում նման բիզնես հիմնելու համար: **Հավատում եմ, որ պրոֆեսիոնալիզմի եւ հասարակ ազնվության համատեղումը կարող է դառնալ առաջընթացի հուսալի ճանապարհ բոլորիս համար:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Փոքր բիզնեսի արդյունավետությունը Հայաստանում ցածր է

## *Ի՞նչ պետք է սովորեն գործարարները*

**Տնտեսական լրագրողների ակումբի նախաձեռնությամբ երեկ լրագրողների հետ հանդիպեցին Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության (ՀԱԳՄ) տնօրեն Գագիկ Մակարյանը եւ «Բիզնեսի աջակցման կենտրոն» ընկերության տնօրեն Սամվել Գեւորգյանը:**

**Գագիկ Մակարյանը ներկայացրեց Հայաստանում փոքր բիզնեսի գործունեության արդյունավետության վերաբերյալ ցուցանիշները: Ըստ նրա, թեեւ գրանցված են շուրջ 130 հազար փոքր ընկերություններ, բայց նրանք համախառն ներքին արդյունքի մեջ (ՀՆԱ) ունեն ընդամենը 42 տոկոս, իսկ զբաղվածության առումով այդ ընկերություններում ընդգրկված են 220-250 հազար մարդ: Փոքր բիզնեսը չունի բարձր արտադրողականություն, քանի որ չունի կառավարման բարձր մակարդակ: Բացի այդ, փոքր բիզնեսը չունի վարկեր ստանալու հնարավորություններ: Այն սկսում է գործել հիմնականում սեփական միջոցներով, եւ երբ կրկին ներդրման կարիք է լինում, միջոցներ չեն գտնվում դրանք ներդնելու համար: Բանկերը հակված չեն փոքր բիզնեսի հետ աշխատելու, քանի որ նույն աշխատանքը պետք է կատարեն, ինչ մեծ ընկերության հետ, բայց ավելի փոքր արդյունք ստանան: Փոքր բիզնեսը չունի բարձր մրցունակություն, ինչի հետեւանքով արտահանման մեջ նրա արտադրանքը կազմում է ընդամենը 9 տոկոս: Առկա է նաեւ անհավասար մրցակցության խնդիրը:**

**Խոսելով վերոնշյալ խնդիրների մասին` Գագիկ Մակարյանը կարեւորեց այն հանգամանքը, որ սկսնակ ընկերությունները ճիշտ իմանան երկրի օրենքները, ճիշտ հաշվարկներ կատարեն, շուկայի ուսումնասիրություն իրականացնեն:**

**«Բիզնեսի աջակցման կենտրոն» ընկերության տնօրեն Սամվել Գեւորգյանը այն կարծիքը հայտնեց, որ Հայաստանի տնտեսության արտադրողականությունը ցածր է: Նա նշեց, որ երկու կարեւոր հարցի լուծում` մրցունակության բարձրացում եւ կոռուպցիայի նվազում: Ըստ Սամվել Գեւորգյանի, քիչ է նաեւ սովորել ցանկացող գործարարների թիվը: Այդ բացը որոշ չափով լրացնելու համար «Բիզնեսի աջակցման կենտրոնը» հրատարակել է «Ինչպես սկսել սեփական բիզնեսը Հայաստանում» գրքույկը, որտեղ հայաստանյան ընկերությունների փորձի հիման վրա նկարագրվում են բիզնես սկսելու, վարելու համար անհրաժեշտ գործողություններն ու դրանց իրականացման ճանապարհները:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԶԳ

# Միջազգային

## Մոսկվան ապահովագրում է Բաքվում ունեցած դեսպանատան գույքը

Ռուսաստանի նախագահի Դմիտրի Մեդվեդեւն ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը վերջին ժամանակներում հաճախ են հանդիպում: Ճիշտ է, որպես կանոն այդ հանդիպումները եռակողմ են, քանի որ մասնակից է նաեւ Հայաստանի նախագահը, ինչից կարելի է հետեւություն անել, որ Մոսկվա-Բաքու հարաբերությունները «առանձնահատուկ» չեն: Անշուշտ, երկու երկրները ունեն մի շարք առեւտրատնտեսական համատեղ նախագծեր, բիզնես ծրագրեր, սակայն Երեւանի պարագայում Մոսկվան, բացի վերոհիշյալից, կապված է նաեւ ռազմական, դաշնագրային, դարավոր բարեկամական կապերով:

Այս ամենը ապացուցելու համար բավական է հիշել Երեւանում հնչեցրած նախագահի Մեդվեդեւի խոսքերը եւ նույն Մեդվեդեւի խոսքերը՝ արդեն Բաքվում: Եթե Հայաստան կատարած վերջին պետական այցի ժամանակ, Մեդվեդեւը կոնկրետ Գյումրիում ՀՀ նախագահի հետ «հիշեց Կովկասի համար իրական պայքարն ու պայքարողներին», իսկ Ծիծեռնակաբերդի բարձունքում հիացավ Արարատ լեռան երեկոյան տեսարանով, հետիոտն զբոսնեց մայրաքաղաքի փողոցներով, ապա Բաքվում ընդամենը ասաց. «Մեր երկու երկրների միջեւ՝ նկատի ունեմ կառավարությունները ու հասարակական կազմակերպությունները, ակտիվորեն ընթանում է համագործակցություն բիզնեսի տարբեր ոլորտներում: Կարծում եմ՝ այստեղ մենք նոր բան ներմուծելու կարիք էլ չունենք. պետք է ընդամենը մեթոդաբար զարգացնել եղած հարաբերությունները»:

Եթե այս ամենը, ինչպես նաեւ Ռուսաստանում գտնվող հայկական համայնքի անհամեմատ ավելի ազդեցիկ ու կազմակերպված լինելը ադրբեջանականից, բավարար չեն հասկանալու, որ նախագահ Մեդվեդեւը (մանավանդ WikiLeaks-յան վերջին հրապարակումներից հետո, ըստ որոնց՝ Իլհամ Ալիեւը նրան «այնքան էլ նախագահ չի համարել»), «ավելի լայն ժպտում» է Սերժ Սարգսյանին հանդիպելիս, ապա ներկայացնենք ros-invest.com դաշնային կայքի հրապարակած տեղեկատվությունը, ըստ որի՝ «Մոսկվան այն երկրներում, որոնց հետ հարաբերություններն այնքան էլ դյուրին չեն եւ որոնցում առկա է ահաբեկչությունների վտանգ, ապահովագրելու է իր դիվանագիտական ներկայացուցչությունների գույքը», որպես «վտանգավոր» երկիր դաշնային կայքը նշել է նաեւ Ադրբեջանը:

Հիշեցնենք՝ այս տարի Մինսկում ՌԴ դեսպանատունը եւ կանադական Մոնրեալում գտնվող հյուպատոսարանը ենթարկվեցին որոշ գրոհների՝ ծայրահեղական տրամադրված ամբոխի կողմից: Այս հանգամանքը, փաստորեն, ստիպել է Մոսկվային ապահովագրել դիվանագիտական գույքը, սակայն ո՛չ Մինսկում գտնվող ռուսաստանյան դեսպանատունը, ո՛չ էլ Մոնրեալի հյուպատոսարանը չեն ընդգրկվել «վտանգավոր ցուցակում»: Իսկ այդ ցուցակում են. Եվրոպայից՝ Իսպանիայում, Չեռնոգորիայում, Կիպրոսում, Մակեդոնիայում, Սերբիայում, ինչպես նաեւ Թուրքիայում գտնվող ՌԴ դեսպանատները: Ցուցակում են նաեւ որոշ բալթյան երկրներ, ինչպես նաեւ երկրներ Ասիայից, Ամերիկայից ու Օվկիանիայից:

Իսկ ԱՊՀ երկրներից Մոսկվան «վտանգ է տեսնում» Մոլդովայում, Վրաստանում, Ղրղզստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում եւ, ինչպես արդեն նշեցինք, Ադրբեջանում: Ավելորդ չենք համարում հիշեցնել՝ «ԱՊՀ ցուցակից», փաստորեն, երեք-ը ՀԱՊԿ անդամներ են:

Ընդհանուր առմամբ ռուսաստանյան արտաքին քաղաքական գերատեսչությունը ապահովագրման ամբողջ ծախսերը գնահատել է ավելի քան 4 մլրդ դոլար: Ապահովագրումը «կծածկի» ՌԴ դեսպանատների հավանական վնասները՝ «ինքնաթիռների եւ հրետանու հարձակումների, շինությունների ապակիները կոտրելու, հրդեհների, ահաբեկչական ակտերի եւ մի շարք այլ պարագաներում»:

Ի՞նչ է նշանակում ռուսաստանյան այս ցուցակում Ադրբեջանին ընդգրկելը, ցույց կտա ժամանակը: Միայն տեղեկացնենք, որ հարեւան երկրում, որտեղ «Բաքուն համարում են Հարավային Կովկասի ամենախաղաղ քաղաքը», «խառնվել» են իրար. տարբեր ռուս գործիչներ ու պաշտոնյաներ պարբերաբար հարցազրույցներ են տալիս ադրբեջանական կայքերին՝ գրելու հարեւանների «խուճապը»:

Ի դեպ, ադրբեջանցիներին կարելի է հասկանալ. մեկ տարուց ավելի Վաշինգտոնը «արհամարհում է» Բաքվում ԱՄՆ դեսպանի աթոռը, իսկ մեկ այլ խոշոր տերություն՝ Ռուսաստանը, «հաշվի առնելով տվյալ երկրի ոչ այնքան դյուրին հարաբերությունները Մոսկվայի հետ ու այնտեղ առկա ահաբեկչության ռիսկը», ապահովագրում է Բաքվում ռուսաստանյան դեսպանատան շենքն ու գույքը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

## Վտանգավոր շնաձկները չեն կարողանում խանգարել զբոսաշրջությանը

Օրերս եգիպտական Շարմ էլ Շեյխ հանգստավայրի լողափերին շնաձկների կողմից «հարձակումները» եւ լողալու նկատմամբ սահմանված արգելքը դեռեւս ազդեցություն չեն ունեցել դեպի Շարմ էլ Շեյխ զբոսաշրջային հոսքի վրա: Շարմ էլ Շեյխի միջազգային օդանավակայանի տնօրենի խոսքով՝ նախորդ երկու շաբաթների ընթացքում օդանավակայանն ընդունել է 740 ինքնաթիռ եւ 113 հազ. զբոսաշրջիկ, իսկ նախապես ծրագրված չվերթերը չեն հետաձգվում: Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա դեկտեմբերի սկզբին Շարմ էլ Շեյխի լողափերին արձանագրվել էր շնաձկների հինգ հարձակում, վնասվածքներ էին ստացել երեք ռուս զբոսաշրջիկ, մեկ ուկրաինացի, իսկ մեկ գերմանուհի էլ մահացել էր: Ըստ տեղական իշխանությունների՝ մշակվում է ինչպես հրատապ, այնպես էլ երկարաժամկետ միջոցառումների համալիր ծրագիր, որի շնորհիվ հնարավոր կլինի սահմանափակել ոչ միայն շնաձկների հարձակումների, այլեւ ջրում դժբախտ այլ պատահարների հավանականությունը: Նախատեսվում է, որ բոլոր լողափերին կտեղադրվեն կապի ժամանակակից սարքավորումներով հագեցած փրկարարական հատուկ աշտարակներ, որոնք փրկարարներին հնարավորություն կտան արագ եւ անհրաժեշտ բոլոր միջոցներով համապատասխան օգնություն ցույց տալու: Բացի այդ՝ հետեւողական ուշադրություն կդարձվի հանգստացողների կարգուկանոնին. հանգստացողները ոչ միայն կտեղեկացվեն հնարավոր վտանգների մասին, այլեւ կծանոթանան ծովային բնակիչների հետ վարվելու առանձնահատկություններին: Ներկայում Շարմ էլ Շեյխի լողափերին հետազոտություններ կատարող մասնագետների խումբը եկել է այն եզրակացությանը, որ շնաձկների հարձակումների հնարավոր պատճառներից են ձկների պակասը, որով նրանք սնվում են, եւ սուզորդների կողմից շնաձկներին անկանոն կերակրելը:

Լ. Մ.

## Անոմալ եղանակը «հասավ» Մերձավոր Արեւելք

Մերձավորարեւելյան երկրներում իսկական ձմեռ է իր բոլոր դրսեւորումներով՝ ուժեղ քամիներից մինչեւ հաստ շերտի ձյուն: Արդեն մի քանի օր Լիբանանում ուժեղ քամիներն ու անձրեւը իսկական քաոսի պատճառ են դարձել՝ հատկապես ծովափնյա շրջաններում: Հաղորդվում է անգամ, որ մեկ հոգի մահացել է, իսկ լեռնային շրջաններում տեղացած առատ ձյան հետեւանքով խնդիրներ են առաջացել բեռների փոխադրման հարցում: Իսրայելում եւս ուժեղ քամիներից էլեկտրաէներգիայի ընդհատումներ են առաջացել: Ընդ որում Իսրայելի կենտրոնական շրջաններում ուժեղ անձրեւներ են, իսկ երկրի հյուսիսում տեղումները ձյան տեսքով են: Փոթորկի հետեւանքով իսրայելական Աշդոդայի շրջանում խորտակվել է մոլդովական բեռնատար նավը, անձնակազմին հնարավոր է եղել փրկել: Սիրիայում եւ Հորդանանում անձրեւի եւ ձյան տեղումներն աննախադեպ են եւ անսպասելի: Եղանակային անոմալ պայմաններ են նաեւ Եգիպտոսում. Սինայի թերակղզում առատ տեղումներ եւ ուժեղ քամիներ են, իսկ Կահիրում՝ փոշոտ ավազային քամիներ, ինչի հետեւանքով խիստ վատթարացել է ճանապարհների եւ Սուեզի ջրանցքի տեսանելիությունը:

Լ. Մ.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## «Համադաշնակիցների» անբաժանելի մենաստանը

Վրաստան եւ Ադրբեջան հարաբերությունները որքան էլ, թեկուզ դեկլարատիվ, սերտ են որակվում եւ թվում են անամպ, բնավ էլ այդպիսին չեն, պարզապես, ինչպես ասում են, նույնանման մտածելակերպը, ինչպես նաեւ հակամարտությունների առնչությամբ մեկ դաշտում գործելու ձգտումը միավորում են այս երկու հարեւաններին, որոնց սահմանները, սակայն, չլուծված շատ հարցեր են պարունակում: Երկու հարեւանների հարաբերությունների վատ իրավիճակը բնավ էլ տարածաշրջանի համար ուրախալի լուրերից չէ, սակայն դրանց բացակայության մասին հայտարարությունների սնանկությունն ապացուցում է, որ Կովկասում էլ գրեթե ոչ մեկը արեւելյան շողոմությունից այն կողմ՝ դեպի առավել քաղաքակիրթ դիվանագիտություն եւ հարաբերություններ, չի անցել:

Վրաստանն ու Ադրբեջանը իրենց «համադաշնային» սահմանին մի հոգեւոր համալիր ունեն՝ ներկայումս ադրբեջանական տարածքում գտնվող Դավիթ Գարեջիի մենաստանը, որի պատկանելության հարցը վիճելի է Ադրբեջանի համար, մինչդեռ վրացական կողմը պնդում է, որ այն չի կարող որեւէ կերպ քննարկման առարկա դառնալ: Այս առնչությամբ տեղեկություններ էին տարածվել, թե Վրաստանն Ադրբեջանին առաջարկել է մենաստանի տարածքը սահմանների հստակեցման ընթացքում ընդգրկել Վրաստանի կազմում՝ դրա դիմաց այլ տարածք տալով: Վրաստանի ԱԳ նախարարությունը հայտարարել է, որ որեւէ պարագայում մենաստանը Ադրբեջանին հանձնելու հարց չի քննարկվում: Տեղեկություններում նշվել է, թե Վրաստանը պատրաստ է մենաստանը ստանալու դիմաց տալ այլ տարածքներ, անգամ վրացական մի գյուղ հետը:

Այդուհանդերձ, վրաց արտգործնախարարությունը հավաստիացրել է, որ Ադրբեջանին մենաստանը զիջելու հարց երբեք չի կարող դրվել օրակարգում: Ու թեեւ սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքները չեն ավարտվել, ու մենաստանն էլ խորհրդային հերթական մի անհեթեթությամբ հայտնվել է ադրբեջանական կողմում, Վրաստանը որեւէ պարագայում չի պատրաստվում մենաստանը զիջել Ադրբեջանին:

Իսկ Ադրբեջանում այս հարցն, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, չեն ցանկացել մեկնաբանել:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Ռուսաստանը կգնի «Միստրալ» ուղղաթիռակիրներ

ՌԴ պաշտպանության նախարարությունը որոշել է գնել ֆրանսիական «Միստրալ» դեսանտային ուղղաթիռակիր նավեր: Այդ մասին հայտարարել է ՌԴ ԶՈւ գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Նիկոլայ Մակարովը: ՌԻԱ գործակալությանը տված հարցազրույցում նա ասել է, որ մինչեւ տարեվերջ «գնային պարամետրերը կհամաձայնեցվեն»:



Պաշտպանության նախարարությունը ՌԴ ծովուժի համար դեսանտային նավերի մատակարարման մրցույթ է հայտարարել է 2010-ի հոկտեմբերի 26-ին: Փակ մրցույթին մասնակցել էին ֆրանսիական, իսպանական, հարավկորեական եւ գերմանական ընկերություններ:

Մրցույթում «Միստրալի» հաղթանակը անակնկալ չեղավ: Ավելի վաղ ՌԴ պաշտպանության նախարարը քանիցս հայտարարել էր, որ «Միստրալի» գնումը առաջնային է եւ որ համապատասխան որոշում արդեն ընդունված է կառավարական մակարդակով: Ֆրանսիայի հետ պաշտոնական բանակցությունները սկսվել էին 2010-ի մարտի 2-ին: Գործարքի գումարը ստույգ հայտնի չէ: Ենթադրվում է, որ կազմում է 1,5 մլրդ եվրո: «Միստրալ» տիպի մեկ ուղղաթիռակրի կառուցումը տեւում է 36 ամիս:

## Հարավկորեական զորքերի շտաբի պետը հրաժարական է տվել



Հարավային Կորեայի ցամաքային զորքերի շտաբի պետ Հվան Ի Դոնը հրաժարական է տվել: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով երկրի պաշտպանության նախարարությանը: Բլումբերգ գործակալության տվյալներով, նախագահ Լի Մեն Բակը ընդունել է զորապետի հրաժարականի դիմումը:

Հվան Ի Դոնը հրաժարական է տվել այն բանից հետո, երբ տեղական մամուլում լուրեր են հայտնվել անշարժ կայքի հետ կապված նրա անօրինական գործարքների մասին: «Գեներալը որոշեց, որ նման հաղորդումներից հետո ինքը չի կարող մնալ պաշտոնում», հայտարարել է պաշտպանության նախարարության անանուն աղբյուրը: Հվան Ի Դոնի հրաժարականի պատճառները պաշտոնապես չեն նշվում:

Նոյեմբերի վերջերին հրաժարական էր տվել պաշտպանության նախարար Կիմ Թե Յոնը: Նա տվյալ քայլին դիմել էր, երբ կառավարող կուսակցությունը եւ որոշ քաղաքական գործիչներ քննադատել էին նախարարության անվճռական գործողությունները նոյեմբերի 23-ին հարավկորեական Յոնփենդո կղզու հրետակոծության ժամանակ: Նախարարին մասնավորապես մեղադրում էին ԿԺԴՀ-ի դեմ ռազմօդանավեր չօգտագործելու համար:

ԱԶԳ

# Մշակույթ

**«20-րդ դար Ֆոքս» կինոընկերության «Հոում էնտերտեյնմընթ» բաժինը վերջերս 18 տեսաժապավեններից կազմված մի եզակի «գանձարան» է թողարկել «Էլիա Կազանի հավաքածու» ընդհանուր խորագրով, որտեղ ընդգրկված են աշխարհահռչակ ռեժիսորի 15 կարեւորագույն ֆիլմերը, մեկ նոր անձնական վավերագրական ֆիլմ եւ 2 «Նամակ Էլիային» ֆիլմեր նրա մտերիմ ռեժիսոր-ընկերներից` Մարտին Սկորսեզեյից եւ Քենթ Ջոնսից: Այդ առթիվ լրագրող-կինոքննադատ Բրուս Դենսիզը հանդես է եկել «Քանզաս Սիթի Սթար» թերթում, որտեղից հոդվածը արտատպել է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթն իր նոյեմբերի 20-ի համարում: Ստորեւ թարգմանաբար քաղվածքներ այդ հոդվածից:**

## «Էլիա Կազանի հավաքածու»` կարեւոր ներդրում կինոարվեստի բնագավառում



Էլիա Կազանը Բրոդվեյի բեմերում եւ Հոլիվուդի էկրաններում իր բարձրակետին հասավ 1930-70-ական թվականներին` նախ լեգենդար «խմբակային թատրոնի» ջանքերով հանդիսատեսին ներկայացնելով Թենեսի Ուիլյամսի «Ցանկության տրամվայը», «Կատուն թիթեղյա տաք տանիքի վրա», Արթուր Միլլերի «Իմ բոլոր որդիները» եւ «Վաճառականի մահը» պիեսները, իսկ այնուհետեւ էկրան բարձրացնելով «Մի ծառ է աճում Բրուկլինում» (1945), «Վիվա Զապատա» (1952), «Քարափում» (1954), «Դրախտից արեւելք» (1955), «Վայրի գետը» (1960), «Ամերիկա, Ամերիկա» (1963) եւ «Վերջին մագնատը» (1976) ֆիլմերը, որոնցում զբաղված դերասաններ Մառլոն Բրանդոն, Ջեյմս Դինը, Էվա Մարի Սենտը, Ջուլի Հարիսը, Կառլ Մոլդենը եւ ուրիշներ համաշխարհային ճանաչման արժանացան: Ընդհանուր առմամբ նրանցից ինը ստացան «Օսկար» մրցանակ, իսկ ինքը` ռեժիսորը, 2 Օսկարի արժանացավ իր «Ջենտլմենների համաձայնությունը» եւ «Քարափում» ֆիլմերի համար:

Բայց «լուրջ, ինտելեկտուալ ու ամենահնարամիտ» ռեժիսորներից մեկը հորջորջված Կազանի կենսագրությունը հարուստ է նաեւ այլ մանրամասներով: 1930-ականների կեսերին, ընդամենը 18 ամիս կոմունիստական կուսակցությանը անդամակցած ռեժիսորը, հետագայում հանրապետական Մակարտիի ծավալած հակակոմունիստական հիստերայի օրերին դարձավ ամենահայտնի «մատնիչը»` իր նախկին ընկերների անունները թվարկողը: 1952-ին, երբ Կազանը Հոլիվուդում համարվում էր «առաջադիմական ֆիլմարտադրող», նրան երկու անգամ Ներկայացուցիչների պալատի «Հակաամերիկյան գործունեություն ծավալողների» հետաքննությամբ զբաղվող կոմիտեի նիստերին են հրավիրել, որոնցից առաջինում նա միայն իր մասին է պատմել` որպես կոմունիստական կուսակցության նախկին անդամի, շեշտելով իր հետագա հիասթափությունն ու ընդվզումը ինչպես դրա ամերիկյան «մասնաճյուղից», այնպես էլ ընդհանրապես Խորհրդային Միությունից, եւ մերժել «այլոց անունները տալ»: Բայց մի քանի ամիս անց, երբ երկրորդ անգամ են նրան հրավիրել, նա որոշ մարդկանց անուններ այնուամենայնիվ տվել է: Այնուհետեւ «Նյու Յորք թայմս» թերթում նա մի ամբողջ էջ է զբաղեցրել` հայտարարելու իր ներկայի ազատական հայացքները, իր տեսակետները ներկայացնելու Խորհրդային Միության հանդեպ` որպես բռնատիրական պետության եւ աշխարհի խաղաղությանը վտանգ սպառնացողի: «Թվում է, թե իր արվեստի սոցիալական բովանդակությունը այդքան լուրջ ընդունելու նրա կարողությունն էր, որ կոմիտեի առաջ հայտնվելը զայրացրել էր իր ընկերներին», գրելու էր հետագայում Վիկտոր Նավասկին իր «Նեյմինգ նեյմզ» («Անուններ մատնանշելը») գրքում:

Իսկ ինքը` Կազանը, փորձելով բացատրել էր վերաբերմունքը, նշել է, որ ինքը պետք է «չարյաց փոքրագույնը» ընտրեր` կա՛մ համագործակցեր նրանց (կոմիտեի ներկայացուցիչների) հետ եւ փրկեր իր կարիերան, կա՛մ էլ մերժեր համագործակցել եւ նպաստել այդ (կոմունիստական) շարժմանը եւ այդ երկրին` Խորհրդային Միությանը (որին ատում էր այժմ), վտանգի ենթարկելով իր կարիերան:

Կազանը, շարունակելով իր կարիերան կինոարվեստի ասպարեզում անմիջապես հետո երկու կինոնկար նկարահանեց իր դիրքորոշումը «արդարացնելու» նպատակով: Մեկը` «Քարափում» ֆիլմն էր, որտեղ հերոսը (Մառլոն Բրանդոն) դատարանում վկայություն է տալիս ընդդեմ արհմիության կոռումպացված աշխատողների, իսկ մյուսը` «Այցելուն» (1972 թ.) հակավիետնամական պատերազմի ֆիլմը (որը ներառված չէ հավաքածուում), որտեղ հերոսը` ամերիկացի նախկին զինվորը (Ջեյմս Վուդ) մեղադրում է իր դասակի ընկերներին մի վիետնամուհու բռնաբարելու եւ սպանելու մեջ:

Բայց նրա արարքը որպես խարան ուղեկցեց նրան մինչեւ իր կյանքի վերջը: Որոշ մարդիկ մատնելու այդ արարքը ճիշտ համարեցին, ուրիշները` սխալ: Հավաքածուն թեեւ չի անտեսում այդ «փաստը», բայց դրան այնքան մեծ ուշադրություն չի դարձնում: Դրա մասին ինչպես Սկորսեզեի վավերագրական ֆիլմում, այնպես էլ դրան ուղեկցող 100-էջանոց պատկերազարդ «գրքում» անդրադարձ կա, երբ խոսվում է 1999-ին նրան պատվավոր Օսկարի կոչում շնորհելու որոշման առաջացրած տարաձայնությունների մասին: Ռոբերտ դը Նիրոն, Ուորեն Բիթին, Կարլ Մոլդինը եւ Սկորսեզը կողմ են եղել, մինչ ուրիշները, չներելով նրան, դեմ` այդ որոշմանը:

«Հավաքածու», այդուհանդերձ, կինոարվեստի սիրահարների համար մեծ պարգեւ է, քանի որ բացի առաջին անգամ DVD-ով ներկայացված Կազանի հինգ` «Մի ծառ է աճում Բրուկլինում», «Վիվա Զապատա», «Լարախաղացը», «Վայրի գետը» եւ «Ամերիկա, Ամերիկա» գլուխգործոց-ֆիլմերից, որոնք քաղաքական-տնտեսական հարցեր են շոշափում եւ տարփողում «մեթոդ էքթինգի» հաղթանակը, ընդգրկում է նաեւ «Ջենտլմենների համաձայնությունը», որը հակասեմական թեման շոշափող առաջին ֆիլմերից մեկն է, «Բումերանգը» (1947) եւ «Խուճապ փողոցում» (1950) ֆիլմերը, որոնք ցույց են տալիս նրա ռեալիստական մեթոդին հավատարիմ մնալու հաստատ համոզմունքը:

Կազանը համարձակորեն կարողանում է խորանալ կեցության ամենաբարդ խնդիրների մեջ, կյանքի ամենաասուր հակասությունների ու բախումների մեջ: Բայց նրա «Ամերիկա, Ամերիկա» ֆիլմը, ըստ իս, բավական ձգձգված է, չնայած 19-րդ դարի վերջում եւ 20-րդի սկզբում Թուրքիայից ճնշված բռնագաղթածների (հույների եւ հայերի) դեպի ազատության երկիրը (Ամերիկան) ձգտումն է առինքնող ձեւով ներկայացնում:

Էլիա Կազանը ծնվել է 1909 թ. Կոստանդնուպոլսում, հույն ծնողների ընտանիքում: Նրա իսկական անունը Էլիա Կազանօղլու է եղել: Ընտանիքը ԱՄՆ է տեղափոխվել, երբ Էլիան ընդամենը 4 տարեկան է եղել: Իր «Նամակ Էլիային» ուղերձում Սկորսեզը մեջբերել է Կազանի խոսքերը, որ «դրաման իրական հուզումներ (սիրո, ատելության, ցանկության, բարկության եւ այլն) առաջացնելն է: Եթե ձեռք բերեցիր այն, ուրեմն ստեղծածդ եզակի է եւ անսովոր»:

Նա իրոք կարողանում էր առաջացնել այդ «իրական հուզումները ինչպես բեմերում` պիեսներում, այնպես էլ էկրաններում, ֆիլմերում: Կազանը վախճանվեց 2003 թվին:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

## Գիտաժողով` նվիրված Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 90-ամյակին

Երեւանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում կազմակերպվել է միջազգային եռօրյա գիտաժողով` նվիրված ականավոր կոմպոզիտոր, ԽՍՀՄ եւ ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 90-ամյակին: Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ դեկտեմբերի 14-ին, մասնաճյուղի դահլիճում մաեստրոյի ներկայությամբ կայացած համերգով: Բազմաստաղանդ արվեստագետի ստեղծագործական դիմանկարը ներկայացրեց կոմպոզիտոր, արվեստագիտության թեկնածու, Երեւանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր **Միխայիլ Կոկժաեւը**: Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործությունների բազմաոճայնությանն էր նվիրված ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի տնօրեն **Կարինե Ավդալյանի** զեկուցումը: Առաջին օրը նախատեսված մյուս զեկուցումները վերաբերում էին կոմպոզիտորի տարբեր տարիների ստեղծագործական որոնումներին, նրա շեփորի կոնցերտին, մաեստրոյի ստեղծագործության պարզությանն ու իմաստնությանը, իսկ Քութաիսիի պետական երաժշտական քոլեջից Ի. Սարուխանովայի զեկուցման թեման էր «Ալեքսանդր Հարությունյանը եւ վրացի կոմպոզիտորները»:

Մեծավաստակ կոմպոզիտորի ստեղծագործության տարբեր կողմեր եւ հայ երաժշտարվեստի արդի խնդիրներ կներկայացվեն գիտաժողովի հաջորդ երկու օրերին ընթերցվելիք եւս մեկ տասնյակից ավելի զեկուցումներում:

Գ. Մ.

«ԷՐԵԲՈՒՆԻ»

## Ավարտվեց «Ճանաչենք հայկական հուշարձանները» եռամյա ծրագիրը

**Երեկ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում կայացավ «Ճանաչենք Հայաստանի հուշարձանները» եռամյա ծրագրի վերջին ամփոփիչ միջոցառումը: Հաճախ մենք հայերս տեղյակ չենք մեր շուրջը գոյություն ունեցող ազգային արժեքների ու հարստությունների մասին: Մենք պետք է գիտակցենք, որ մեր հինավուրց ազգը բազմաթիվ արհավիրքների միջով անցել եւ շարունակել է ապրել շնորհիվ նրա, որ մեր նախնիները պահպանել են մեր ազգի մշակութային եւ պատմական արժեքները, դրանք փոխանցել սերնդեսերունդ` որպես ազգային ինքնության պահպանման միակ գրավական: Եվ ահա երեք տարի առաջ Գյումրիում Իտալիայի պատվո հյուպատոս Անտոնիո Մոնտալտոյի աջակցությամբ, ԱՄԱՓ-ի ծրագիրն իրականացավ «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի, ԱՄՆ-ի USAID/CAPS-ի (ղեկ.` Արտակ Ղազարյան) Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցության շնորհիվ: Ծրագրի ընթացքում Հայաստանի 175 պատմամշակութային վայրերում տեղադրվել են 329 հինգ լեզվով տեղեկատվական վահանակներ, 352 ճանապարհային ցուցանակներ, 35 բրայլյան վահանակներ եւ 129 նշաններ, որից 116-ը միայն 2010-ին: 25 հնավայրեր այսօր զինված են հինգ լեզվով տեղեկատվական վահանակներով եւ եւս 6 լեզվով լամինացված թերթիկներով. «Ճանաչենք եւ պահպանենք հայկական հուշարձանները» կոչով:**

**Անցած երեք տարիների ընթացքում նշվել են նաեւ թեմատիկ երթուղիներ` «Մետաքսի ճանապարհը», «Թագավորներ, թագուհիներ եւ իշխաններ», «Բնության արահետներ» եւ տեղադրվել են հանգստի կանգառներ: «Էրեբունի» թանգարանում ծրագրի շրջանակներում տեղադրվել են 45 հինգ լեզվով բացատրական ցուցանակներ ոչ միայն ցուցանմուշների կողքին, այլեւ եւս 15-ը թանգարանի ողջ տարածքում: Այսօր թանգարանը միակն է, որտեղ նման ծավալուն կարեւոր աշխատանք է կատարվել ծրագրի շրջանակներում:**

**Ծրագրի ավարտի հանդիսությանը ներկա էին ե՛ւ հովանավորներ, ե՛ւ աջակիցներ, որոնց հասցեին գնահատանքի խոսքեր հղեց Թռիկ Նանը ու նրանց հանձնեց հուշանվերներ:**



**Թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանը հատուկ շնորհակալություն հայտնեց նման ուշադրության ու աջակցության համար` «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր» ՀԿ նախագահ Թռիկ Նանին երկարամյա համագործակցության համար եւ տեղեկացրեց, որ Երեւանի քաղաքապետարանի 2011 թ. ծրագրով թանգարանի տարածքում, բլրի վրա կկառուցվի ամֆիթատրոն` 500 տեղով, որտեղ կլինեն բազմաթիվ միջոցառումներ: Ահա արդեն «Էրեբունի» արգելոց-թանգարանն ամբողջովին դարձավ զբոսաշրջիկների համար գրավիչ մի վայր, միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան: Ծրագրի մասնակիցները շրջեցին թանգարանի ողջ տարածքում, ծանոթացան կատարված վերանորոգման եւ վերանորոգվող աշխատանքներին, նաեւ` շարունակվող պեղումների ընթացքում հայտնաբերված գտածոներին:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

## «Սոցիալական ախտերի լուծման ուղին մեղքից հեռանալն է»

### Միքայել եպիսկոպոս Աջապահյանի «Զրույցները» մեկ գրքում

**Այսօր սոցիալական եւ մյուս ախտերի տարածման հիմնական պատճառն այն է, որ մարդկությունը դրանց լուծման ճանապարհը Աստվածաշնչում չէ, որ որոնում է, այլ ուրիշ տեղերում: Իսկ Աստվածաշունչը շատ հստակ ասում է. որեւէ ախտ, որ գոյություն ունի, մեղքի պատճառով է, մեղքի հետեւանք: Մարդը փոխանակ իր ջանքերն ուղղի մեղքն արմատախիլ անելուն, հակառակ ուղղությամբ է գնում, ուզում է այդ մեղքը կարգավորել, կանոնակարգել, համակարգի բերել: Բայց դա չի ստացվում, եւ գնալով մի մեղքը ծնում է մեկ ուրիշը:**

**Այս մտքերը Շիրակի հոգեւոր թեմի առաջնորդ Տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանինն են, նրանք դա արտահայտել է իր կանոնավոր անցկացվող «Աստվածաշունչը եւ մենք» թեմատիկ զրույցներից մեկի ժամանակ: «Երկրաշարժի մասին էլ ես հաճախ ասում եմ,- նշում է սրբազանը,- որ մեր մեղքի պատճառով էր, որ երկրաշարժը տեղի ունեցավ եւ այդպիսի մեծաքանակ զոհերով: Շատերը չեն հասկանում ասածս, շատերը մտածում են, որ ես ասում եմ, թե դա Աստծո պատիժն էր, այսինքն` եթե մենք խելոք լինեինք, երկրաշարժ տեղի չէր ունենա: Դա չէ իմ ասածը, չնայած դա էլ է լրիվ հնարավոր: Այո՛, եթե մեր մեջ դրական էներգիան շատ լիներ, շատ հնարավոր է, որ երկրաշարժ չլիներ: Բայց իմ ասածը դա չէ: Եթե մեր կեցվածքը Աստծո առջեւ ճիշտ լիներ, այդ երկրաշարժը մեզ չէր կարող վնասել: Այդքան վնասներ չէր կարող տալ, այդքան զոհեր չէին լինի»:**

**Առաջնորդ սրբազանի առաջին տասը զրույցները, որոնք ժամանակին գրի են առել Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի կամավորները, Սախարովի անվան հայկական իրավապաշտպան կազմակերպության աջակցությամբ մեկ գրքով լույս է ընծայել Գյումրու «Դպիր» հրատարակչությունը: «Աստվածաշունչ եւ հասարակություն» վերնագրված զրուցագրքում, նրա տարբեր թեմաներով հոգեշահ զրույցներում, ինչպես նշվում է գրքի ընծայականում, ընթերցողը կգտնի հանրության տարբեր շերտերին ու խմբերին հուզող հասարակական տարաբնույթ երեւույթների ինքնատիպ մեկնություններ, որոնց սկզբնաղբյուրը Աստվածաշունչն է:**

**«Ես մխիթարված կզգամ ինձ, եթե իրոք այս գիրքը ծառայի իր նպատակին` Աստծուն եւ հասարակությանն իրար մոտեցնելուն»,- զրուցագրքի` օրերս տեղի ունեցած շնորհանդեսի ժամանակ ասաց Միքայել սրբազանը: Շնորհանդեսի մասնակիցները, կարեւորելով ժողովածուի լույսընծայումը, հույս հայտնեցին, որ այս նախաձեռնությունը շարունակություն կունենա:**

Գ. Մ.

# Տիգրան Գ. Մարտիրոսյանը լավագույնն է Հայաստանում

## *Հայաստանի 10 լավագույն մարզիկները*

Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիան ամփոփեց տարվա լավագույն մարզիկի տիտղոսի համար անցկացրած հարցման արդյունքները: Ինչպես կանխատեսել էինք, Հայաստանի լավագույն մարզիկի տիտղոսի համար հիմնական պայքարն ընթացավ ծանրորդ Տիգրան Գ. Մարտիրոսյանի եւ շախմատիստ Լեւոն Արոնյանի միջեւ: Հարցմանը մասնակցած 47 լրագրողները նախապատվությունը տվել են ծանրամարտի աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն **Տիգրան Գ. Մարտիրոսյանին**: Նա վաստակել է 462 միավոր՝ 63 միավորով գերազանցելով 2-րդ տեղը զբաղեցրած Լեւոն Արոնյանին:





Այսպիսով, 2-րդ տարին անընդմեջ Հայաստանի լավագույն մարզիկ է ճանաչվում ծանրամարտի ներկայացուցիչը: Հիշեցնենք, որ 2009-ի լավագույնի դափնին տրվել էր Նազիկ Ավդալյանին, որը հայկական կանանց ծանրամարտի պատմության մեջ առաջին աշխարհի չեմպիոնն է: Կարծում ենք օրինաչափ է նաեւ Տիգրան Գ. Մարտիրոսյանի հաղթանակը: Տիգրանն էլ իսկական մարզական սխրանք գործեց Անթալիայում կայացած ծանրամարտի աշխարհի առաջնությունում՝ երկամարտի 373 կգ (173+200) արդյունքով ուժեղագույնը ճանաչվելով մինչեւ 77 կգ քաշային կարգում, հաղթող դուրս գալով չինացի ծանրորդի հետ մղված բավական համառ մրցապայքարում: Տիգրանը Իսրայել Միլիտոսյանից հետո դարձավ վերջին 20 տարիների հայ առաջին աշխարհի չեմպիոնը: Գարնանն էլ նա Մինսկում կայացած ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում երկամարտի 360 կգ (165+195) արդյունքով էր չեմպիոն հռչակվել: Իրոք որ մրցաշրջանը հաջող էր հայ դյուցազնի համար եւ մարզական լրագրողները նրան արժանիորեն ճանաչեցին Հայաստանի լավագույն մարզիկ:

2-րդ հորիզոնականը զբաղեցրած **Լեւոն Արոնյանը** եւս այս տարի հաջող ելույթներ ունեցավ թե հավաքականի կազմում, թե անհատական մրցաշարերում՝ հռչակվելով կայծակնային շախմատի աշխարհի չեմպիոն: Իհարկե, Լեւոնի հաղթելու հնարավորությունները ավելի բարձր կլինեին, եթե Հայաստանի շախմատի հավաքականը Խանտի Մանսիյսկում 3-րդ անգամ անընդմեջ օլիմպիադայի չեմպիոն դառնար:

Լավագույն եռյակը եզրափակում է հունահռոմեական ոճի ըմբիշ **Արսեն Ջուլֆալակյանը**: Նա տարեսկզբին Հայաստանի հավաքականի կազմում դարձավ աշխարհի գավաթի խաղարկության բրոնզե մրցանակակիր, իսկ աշխարհի առաջնությունում նվաճեց փոխչեմպիոնի տիտղոսը: Արսեն Ջուլֆալակյանը վաստակեց 311 միավոր:

253 միավորով 4-րդ տեղը գրավեց լավագույն տասնյակում միակ օտարազգի մարզիկը՝ Հայաստանի դրոշի ներքո հանդես եկող գերծանրքաշային ըմբիշ **Յուրի Պատրիկեեւը**: Ռուսաստանցի ըմբիշը կրկնեց Արսեն Ջուլֆալակյանի ցուցանիշը՝ եւս մեկ արծաթե մեդալ պարգեւելով Հայաստանի հավաքականին աշխարհի առաջնությունում:

5-րդ հորիզոնականը 230 միավորով զբաղեցրեց բռնցքամարտիկ **Հրաչիկ Ջավախյանը**: Եվրոպայի առաջնությունում նա հիանալի հանդես եկավ եւ ուժեղագույնը ճանաչվեց քաշային իր կարգում:

6-րդ տեղում 183 միավորով սամբիստ **Արթուր Դանիելյանն է**: Արթուրի համար էլ ընթացիկ մրցաշրջանը շատ հաջող էր: Ստեփանակերտցի ըմբիշը մեծ վերելքով հանդես եկավ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում՝ երկու մրցաշրջանում էլ նվաճելով չեմպիոնի տիտղոսները: Նա հաղթող ճանաչվեց նաեւ աշխարհի գավաթի խաղարկության փուլերից մեկում:

Հաջորդ երկու տեղերում ծանրորդներն են: **Մելինե Դալուզյանը** 141 միավորով 7-րդ հորիզոնականում է: Հիվանդությունից հետո Մելինեն կրկին մրցահարթակ դուրս եկավ եւ իր համար քաշային նոր կարգում (69 կգ) կարողացավ մրցանակակիր դառնալ ինչպես Եվրոպայի (արծաթ), այնպես էլ աշխարհի (բրոնզ) առաջնություններում:

Մեր մյուս ծանրորդը՝ **Գեւորգ Պողոսյանը** 131 միավորով 8-րդ տեղում է: Նա հիանալի հանդես եկավ Մինսկում անցկացված ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը:

9-րդ հորիզոնականը 116 միավորով զբաղեցնում է հունահռոմեական ոճի ըմբիշ **Ռոման Ամոյանը**: Նա աշխարհի առաջնությունում դարձել է բրոնզե մրցանակակիր:

Լավագույն տասնյակը եզրափակում է գերծանրքաշային ծանրորդ **Ռուբեն Ալեքսանյանը**: Երիտասարդ ծանրորդը վստահ հանդես եկավ Եվրոպայի մեծահասակների առաջնությունում՝ դառնալով 2-րդ մրցանակակիր: Իսկ ահա աշխարհի երիտասարդական առաջնությունում նա ուժեղագույնն էր:

Ամփոփելով հարցման արդյունքները, նշենք, որ լավագույն տասնյակում ընդգրկվել են 4 ծանրորդներ, 3 ըմբիշներ, մեկական շախմատիստ, սամբիստ եւ բռնցքամարտիկ: Հարցաթերթիկներում նշվել են նաեւ ֆուտբոլիստներ **Հենրիխ Մխիթարյանը, Յուրա Մովսիսյանը, Կառլեն Մկրտչյանը, Գեւորգ Ղազարյանը, սամբիստներ Վաչիկ Վարդանյանը, Տիգրան Կիրակոսյանը, ծանրորդներ Հռիփսիմե Խուրշուդյանը, Արա Խաչատրյանը, Սմբատ Մարգարյանը, բասկետբոլիստուհի Քրիստինե Քեփենեկյանը:**

2010-ի լավագույն թիմ է ճանաչվել ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը:

## Միչիգանում նոր ռեկորդ սահմանվեց

Միչիգանում տափօղակով հոկեյի խաղի հաճախելիության նոր ռեկորդ է սահմանվել: Ուսանողական լիգայում հանդես եկող միչիգանյան երկու թիմերի խաղին ներկա է գտնվել 113411 մարզասեր: Այդ խաղում Միչիգանի համալսարանի թիմը 5-0 հաշվով պարտության է մատնել Միչիգանի նահանգի հոկեյիստներին:





Հոկեյի սահադաշտը պատրաստել էին ամերիկյան ֆուտբոլի համար նախատեսված մարզադաշտում: Նոր ռեկորդի սահմանման մասին ռադիոհանգույցով հայտարարել են 3-րդ խաղափուլում: Հանդիպմանը ներկա են գտնվել նաեւ Գինեսի ռեկորդների գրքի ներկայացուցիչները, որոնք հաստատել են նոր նվաճման գրանցման փաստը:

Հոկեյի հանդիպման հաճախելիության աշխարհի նախկին ռեկորդը սահմանվել էր տարեսկզբին Գերմանիայում կայացած աշխարհի առաջնության ժամանակ: Գերմանիա-ԱՄՆ հանդիպմանը ֆուտբոլի մարզադաշտում կառուցված սահադաշտում ընթացող մրցապայքարին հետեւել էին 77803 հանդիսականներ:

## Շվեյցարացիները գնում են անգլիացիների հետքերով

**Շվեյցարիայի իշխանությունները մտադիր են ստուգել երկրի տարածքում գտնվող միջազգային մարզական կազմակերպությունների, մասնավորապես ՖԻՖԱ-ի, ՈւԵՖԱ-ի եւ նույնիսկ ՄՕԿ-ի գործունեությունը: Անգլիական լրատվամիջոցներում ՖԻՖԱ-ի անդամների հասցեին հնչած մեղադրանքներից հետո Շվեյցարիայի Ժողովրդական կուսակցության անդամ, պատգամավոր Ռոլանդ Բյուխելը համապատասխան հարցում է կատարել երկրի կառավարությանը: Վերջինս ուսումնասիրելով հարցադրումը, նշել է, որ շահագրգռված է բոլոր մակարդակներով անօրինական գործունեության արգելմանը:**

**Համապատասխան ստուգումների արդյունքում Շվեյցարիայի սպորտի նախարարությունը զեկույց կկազմի, որում կնշվեն, թե մարզական այդ կազմակերպություններն ինչպիսի միջոցներ են ձեռնարկում հնարավոր խախտումները թույլ չտալու, եղածները վերացնելու համար:**



## Անդրեասյանը կվիճարկի Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը

**Ընթացիկ մրցաշրջանում հաջող հանդես եկող Զավեն Անդրեասյանը Վարշավայում կմասնակցի կայծակնային եւ արագ շախմատի Եվրոպայի առաջնություններին:**

**Դեկտեմբերի 17-ին կխաղարկվի կայծակնային շախմատի Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, իսկ հաջորդ երկու օրերին շախմատիստները կպայքարեն արագ շախմատում Եվրոպայում ուժեղագույնը ճանաչվելու համար:**

**Նշենք, որ երկու մրցաշարերում էլ մեծ թվով շախմատիստներ են հանդես գալու: Կայծակնային շախմատի մրցաշարում հայտավորված են 401 շախմատիստներ, արագ շախմատի մրցավեճին կմասնակցեն 783 հոգի:**

**Զավեն Անդրեասյանն իր վարկանիշով (2585) մասնակիցների մեջ 34-րդն է: Մրցաշարում հանդես կգան մի շարք ուժեղագույն գրոսմայստերներ: Բավական է նշել մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող Վասիլի Իվանչուկին (2764), Ռուսլան Պոնոմարյովին (2744), Սերգեյ Մովսիսյանին (2721), Բայադուր Ջոբավային (2707), Մաքսիմ Վաշիե-Լագրավին (2703): Բացի նշվածներից, արագ շախմատի մրցաշարին կմասնակցեն նաեւ Ալեքսեյ Շիրովը (2735), Վուղար Հաշիմովը (2733), Ռադոսլավ Վոյտաշեկը (2726), Զոլթան Ալմազին (2721), Յուդիթ Պոլգարը (2686):**

## Հաղթական մեկնարկ

**Շախմատի Հայաստանի չեմպիոն Ավետիք Գրիգորյանը հաղթանակով մեկնարկեց Բուլղարիայի Բանսկո քաղաքում անցկացվող մրցաշարում՝ պարտության մատնելով Վիկտոր Կորոզլուին: 2-րդ տուրում հայ շախմատիստը կմրցի Ստիլիոս Մալիկենթոզի հետ:**

## Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին





**Նախորդ տարիների համեմատ Հայաստանում 2011-ի ֆուտբոլային մրցաշրջանը բավական շուտ է մեկնարկելու՝ մարտի 1-ին: Նպատակն այն է, որպեսզի հավաքականի ֆուտբոլիստներն առաջնության եւ գավաթի հանդիպումներում լավ մարզավիճակ ձեռք բերեն ու պատշաճ մակարդակով ներկայանան մարտի 26-ին Ռուսաստանի հավաքականի հետ Երեւանում կայանալիք ընտրական մրցախաղին:**

**Երեկ ֆուտբոլի ֆեդերացիայում կայացավ Հայաստանի 2011-ի գավաթի խաղարկության վիճակահանությունը: Մինչ այդ բարձրագույն խմբի 9 թիմերը վիճակահանությամբ համապատասխան համարներ ստացան, որոնց հիման վրա էլ կազմվելու է առաջնության խաղացանկը: Ըստ հերթականության, թիմերը հետեւյալ կերպ դասավորվեցին. «Կիլիկիա», «Արարատ», «Միկա», «Իմպուլս», «Գանձասար», «Ուլիս», «Փյունիկ», «Շիրակ», «Բանանց»:**

**Առայժմ պարզ չէ, թե առաջնությունն ինչպիսի մրցակարգով է անցկացվելու: Ֆուտբոլի ֆեդերացիան առաջարկելու է առաջնությունն անցկացնել 4 շրջանով: Եթե ակումբների ղեկավարները համաձայնեն առաջարկին, ապա կանցկացվի 36 տուր, ընդ որում յուրաքանչյուր տուրում թիմերից մեկն ազատ կլինի խաղից, քանի որ մասնակիցների թիվը կենտ է: Ելնելով կատարված վիճակահանությունից, կարելի է արդեն նշել առաջնության մեկնարկային տուրի զույգերը. «Արարատ»-«Բանանց», «Միկա»-«Շիրակ», «Իմպուլս»-«Փյունիկ», «Գանձասար»-«Ուլիս»: Նախատեսվում է առաջնության հանդիպումներն անցկացնել շաբաթ եւ կիրակի:**

**Այնուհետեւ կայացավ Հայաստանի գավաթի խաղարկության վիճակահանությունը: Քանի որ մասնակիցների թիվը կենտ է, ապա մինչեւ 1/4 եզրափակիչը կանցկացվի նախնական փուլի մեկ հանդիպում «Արարատի» եւ «Շիրակի» միջեւ: Քառորդ եզրափակիչի ուղեգիրը նշված թիմերը կվիճարկեն մեկ խաղում, չեզոք դաշտում: Հանդիպումը կկայանա մարտի 1-ին: «Արարատ»-«Շիրակ» հանդիպման զույգի հաղթողը քառորդ եզրափակիչում կմրցի «Փյունիկի» հետ: Քառորդ եզրափակիչի մյուս զույգերը կազմել են «Ուլիսն» ու «Կիլիկիան», «Բանանցն» ու «Գանձասարը», «Միկան» ու «Իմպուլսը»: Առաջին հանդիպումները նշանակված են մարտի 10-11-ին եւ կկայանան զույգերում առաջինը նշված թիմերի դաշտերում: Պատասխան հանդիպումները տեղի կունենան մարտի 14-15-ին: Կիսաեզրափակիչի առաջին խաղերը նշանակված են ապրիլի 12-13-ին, պատասխան խաղերը՝ ապրիլի 26-27-ին: Եզրափակիչ հանդիպումը տեղի կունենա մայիսի 9-ին «Հանրապետական» մարզադաշտում:**

## Մոնակոյի արքայազնին մեղադրում են կաշառակերության մեջ

**Բրիտանական մամուլում կոռուպցիայի բացահայտման հերթական փորձն է արվել: Ըստ The Independent-ի, Մոնակոյի արքայազն Ալբեր Երկրորդը Ռուսաստանի ներկայացուցիչներից թանկարժեք նվերներ է ստացել, որոնց դիմաց քվեարկել է հօգուտ Սոչիի: Այս մասին դեկտեմբերի 9-ին ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեին հղած նամակում տեղեկացրել է Մոնակոյում աշխատած հետախուզության գծով գաղտնի խորհրդական Ռոբերտ Էրինջերը: Փաստորեն նա ղեկավարում էր Մոնակոյի հատուկ ծառայությունը: 56-ամյա Էրինջերն ԱՄՆ-ի քաղաքացի է, մասնավոր խուզարկու, լրագրող եւ գրող: Ներկայումս ամերիկյան Սանտա Բարբարա քաղաքի դասարանում լսվում է Էրինջերի հայցն ընդդեմ Ալբեր Երկրորդի, որն աշխատանքի դիմաց Ռոբերտին մոտ 40 հազար եվրո է պարտք:**

**Դատարանում Էրինջերը հայտարարել է, որ Ալբեր Երկրորդը թանկարժեք նվերներ եւ այլ վարձատրություններ է ստացել ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինից եւ սենատոր Սերգեյ Պուգաչյովից: Ըստ նրա, 2006-ին Մոնակոյի արքայազնը Ռուսաստանի ֆինանսավորմամբ ճանապարհորդել է Արկտիկայով, այնուհետեւ Կրեմլում հանդիպել է Վլադիմիր Պուտինի հետ: Ամենամեծ կաշառքը Էրինջերը համարում է ռուսական փողերով Ալբեր Երկրորդի համար ամառանոցի կառուցումը: Այժմ Էրինջերը խնդրում է ՄՕԿ-ի նախագահին հետաքննություն անցկացնել, որպեսզի հետագայում օլիմպիադայի մայրաքաղաքի ընտրության ժամանակ նման դեպքերը չկրկնվեն:**

**52-ամյա Ալբեր Երկրորդը որպես բոբսլեյիստ 5 անգամ մասնակցել է օլիմպիական խաղերին: Նա 1994-ից ՄՕԿ-ի անդամ է: Նա Մոնակոյի արքայազն դարձավ 2005-ին: Մինչեւ վերջերս Ալբեր Երկրորդն ամուրի էր: Այս տարվա հունիսին նա նշանվեց հարավաֆրիկացի լողորդուհի, օլիմպիական չեմպիոնուհի Շառլին Ուիտստոկի հետ: Նրանց հարսանյաց հանդեսը ծրագրված է 2011-ի ամռանը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## Ի՞նչ ազգանուն կընտրի Ադրբեջանի նախագահը

Ըստ երեւույթին, հարեւան երկրում որոշել են վերջնականապես հրաժեշտ տալ այն ամենին, ինչ «ազգային նույնականացմանը խանգարում է»: Ադրբեջանի ԳԱԱ տեղեկատվական տեխնոլոգիաների գիտահետազոտական ինստիտուտը մշակել եւ խորհրդարանի հաստատմանն է ներկայացրել «Ազգանունների մասին» օրինագիծ:

Ըստ այդմ, օրինագիծն ընդունվելուց եւ ուժի մեջ մտնելուց հետո «բոլոր նորածինների համար պարտադիր կլինի ներկայում գործող ազգանունների «ով», «եւ» վերջավորությունների փոխարեն գրել «լի», «լու», «օղլու» կամ «սոյ»»: Ավագ սերնդի քաղաքացիների համար «կգործի կամավորության սկզբունքը»:

Օրինագծի հեղինակները հավաստիացնում են, որ «դա կվերաբերի միայն ազգությամբ ադրբեջանցիներին եւ նրանց, ովքեր իրենց կհամարեն ադրբեջանցի»:

Արտառոցն այն է, որ Ադրբեջանի սահմանադրությամբ ադրբեջանցի են համարվում բոլոր քաղաքացիները: Այդ տրամաբանությամբ, կամավոր թե պարտադիր, բոլոր քաղաքացիներն էլ կարող են ունենալ «ազգային նույնականացմանը համապատասխանող» ազգանուն: Ճիշտ է, օրինագծի հեղինակները մի փոքր «սողանցք» թողել են. մարդիկ իրավունք կունենան ձեռք բերելու, այսպես կոչված «աշխարհագրական» եւ «տոհմական ազգանուններ»: Ասենք, եթե քաղաքացին ազգությամբ թալիշ է եւ ծնվել է Լենքորանում, իրավասու է դատական մարմիններից պահանջելու, որ անձնագրում ունենա «Լենքորան» ազգանունը կամ որպես ազգանուն ընտրի հոր, պապի, նախապապի անձնանունը: Դիցուք՝ Հեյդար Ալիռզա:

Ազգությամբ թաթերին կթույլատրվի ունենալ «զադե» վերջավորությամբ ազգանուն: Բայց այդ դեպքում, հավանական է, խնդիրներ կառաջանան: Մասնավորապես, ի՞նչ որոշում պիտի ընդունի վարչապետ Արթուր Ռասիզադեն՝ պահել ազգանունը եւ այդպիսով ընդունե՞լ, որ ազգությամբ թաթ է, թե՞ իրեն համարել ադրբեջանցի եւ կոչվել Արթուր Ռասի: Կամ՝ Ռասիլու, Ռասիօղլու, Ռասիսոյ: Նույն խնդիրը, հավանաբար, կունենա նաեւ Կովկասի մուսուլմանների հոգեւոր առաջնորդը, որի ազգանունը Փաշազադե է: Օրենքն ընդունվելու դեպքում նաեւ կհամարվի, որ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության հիմնադիրներից մեկը՝ Ռասուլզադեն նույնպես ազգությամբ թաթ է եղել:

Բայց ամենահետաքրքրականն այն է, թե ի՞նչ ազգանուն կընտրի Ադրբեջանի նախագահը: Բնական է, որ «ազգային նույնականացման» առաջին օրինակը պետք է նա տա: Հակառակ դեպքում ծիծաղելի կլինի քաղաքացիներից պահանջել, որ հրաժարվեն իրենց ազգանվան «ով» կամ «եւ»՝ ռուսականը հիշեցնող վերջավորություններից:

Իլհամ Ալիեւը, ինչպես եւ մյուս քաղաքացիները, շատ մեծ ընտրության հնարավորություն ունի: Նա կարող է ընտրել ազգանվան «եւ»-ը պարզապես ջնջելու տարբերակը եւ դառնալ Իլհամ Ալի: Կարող է կոչվել Իլհամ Հեյդարօղլու: Հնարավոր է՝ նա փորձի հավերժացնել պապի հիշատակը եւ ընտրի Ալիռզա ազգանունը:

Տարբերակներն, այսպիսով, մի քանիսն են: Բայց խորհրդի կարգով, թվում է, պետք է ասել, որ նպատակահարմար է, որ նա ընտրի բոլորովին նոր՝ իր պաշտոնից բխող ազգանուն: Թող կոչվի Իլհամ Սուլթանսոյ: Ճիշտ է, ինքը սուլթանական ցեղից չէ, բայց չէ՞ որ ազգանուն ընտրում է ոչ միայն իր, այլ նաեւ զավակի, թոռների համար:

Ի՞նչն է խանգարում, որ նախագահի պաշտոնը գահաժառանգության սկզբունքով զբաղեցնելուց եւ որդուն փոխանցելու մտադրությունը սահմանադրությամբ ամրագրելուց հետո նա իշխանության կրողի համար ընտրի հենց ազգանուն՝ Սուլթանսոյ՝ «սուլթանի ցեղից սերված»: Կամ՝ «սուլթանակերպ»:

Իսկ գուցե «ազգային նույնականացման» հետ կապված օրենսդրական այդ «նախաձեռնությունը» հենց այդ նպատա՞կն է հետապնդում:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔ

## Կլինի՞ հետեւողական պայքար ընդդեմ կամայականության եւ կոռուպցիայի

Չէի ասի, թե ռուսաստանյան լրատվամիջոցները Երեւանի քաղաքապետի հետ կապված սկանդալային իրադարձությունները ու նրա շտապ պաշտոնանկումը մեկնաբանեցին չարախնդորեն, ինչպես պնդում են որոշ հայկական թերթեր: Պարզապես տեղի ունեցածի սոսկ շարադրումն անգամ («армянские разборки») տհաճ տպավորություն էր գործում, հատկապես ռուսահայերի վրա: Վերջիններիս համակրանքը, անշուշտ, նախագահի կողմն էր, սակայն այն հույսով, որ դա սոսկ զգացմունքային էքսպրոմտ չի լինի, այլ ներքին քաղաքականության սկիզբ՝ պայքար ընդդեմ չինովնիկների կամայականության, ընդդեմ կոռուպցիայի, հանուն արդար պետության կառուցման, որի կարիքն այնքան զգում է բովանդակ հայ ժողովուրդը: Ըստ երեւույթին ժամանակն է, որ երկրի ղեկավարը տարանջատվի ամեն տեսակի էկզոտիկ՝ գունավոր թե անգույն, ապրանքանիշային թե զոոլոգիական մականուններով անձանցից: Այդ մարդիկ գործարար են, ձեռներեց, ուրեմն թող զբաղվեն իրենց գործով՝ բիզնեսով: Բայց չի կարելի վստահել նրանց պետական բարձր պաշտոններ, քանզի նրանք, որպես կանոն, զուրկ են այդ մակարդակի համար պարտադիր երկու պայմանից՝ ինտելեկտից ու հատկապես՝ կուլտուրայից: Ի դեպ, Երեւանից ուղարկված մի մեկնաբանության մեջ արատավոր էր համարվել այն պրակտիկան, երբ Հայաստանում պետական պաշտոն առաջարկելիս ուշադրության չեն առնում անձի կենսագրությունն ու ժողովրդի վերաբերմունքը նրա նկատմամբ:

Բայց այս աղմկաշատ իրադարձության ֆոնի վրա փաստորեն աչքաթող արվեց մի իրողություն, որը թվում է, անհամեմատ ավելի կարեւոր է ու անհանգստացնող երկրի բախտի համար: Այդ նույն օրերին հայոց ԶԼՄ-ները ու հատկապես հեռուստատեսությունը ի լուր ամենքի (այդ թվում նաեւ սփյուռքի) լայնորեն ազդարարեցին, որ Հայաստանում ամենակոռումպացվածը... կրթության համակարգն է: Ոչ թե «ավանդական» իրավապահ մարմինները, այլ հայ ժողովրդի նոր սերնդի դաստիարակության դպրոցը: Աննախադեպ երեւույթ քիչ թե շատ քաղաքակիրթ աշխարհում: Եթե այդպես է, ուրեմն սա մահավճիռ է ազգին, ուրեմն կմեծանա մի սերունդ, որը որովայնից բացի ուրիշ իդեալ չի ունենա: Թվում էր՝ նախագահը, վարչապետը, Ազգային ժողովը անմիջապես հրապարակային բացատրություն կպահանջեն այս ասպարեզի համար պատասխանատու անձից. եթե մեղավոր է, թող ենթարկվի հասարակական պարսավանքի, եթե անմեղ է, թող վերականգնված բարի անունով վայելի պաշտոնը: Ոչինչ տեղի չունեցավ, ոչ ոք չտագնապեց լրատվամիջոցներից բացի: Արդարադատության նախարարի կողմից մի պարտականության չկատարումը մանկական խաղ է մարդասիրական ու բարոյական մի ողջ առաքելության տապալման համեմատ: Բեգլարյանական ծեծկռտուքը մթագնե՞լ էր ամեն ինչ:

Ո՞րն է ավելի կարեւոր:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

## «Հայաստանը կկարողանա՞ ճանաչել Ղարաբաղի անկախությունը»

*1-ին էջից*

Հարկ է սակայն նշել, որ ԼՂՀ անկախության ճանաչման հարցը բարձրացնելու պարագայում խնդիրը սոսկ քվեարկության արդյունքները կամ ԱԺ-ում օրինագծի տապալումը չեն, այլ այս ամենի թուրք-ադրբեջանական արձագանքներն են նաեւ: Այդ առումով հատկանշական է ադրբեջանցի հեղինակ Ջավիդ Վելիեւի դեկտեմբերի 14-ին Նյու Յորքի turkishny.com կայքէջում «Հայաստանը կարո՞ղ է ճանաչել Ղարաբաղը» վերնագրով հրապարակված հոդվածը, որի կրճատ տարբերակը ուշադրության եք ներկայացնում:

**«Որքան էլ Հայաստանը, զավթելով Ադրբեջանի Ղարաբաղ շրջանը, այնտեղ ստեղծի միջազգային իրավունքի նորմերին հակասող (պետական) կառույց, անցած 16 տարիների ընթացքում ի վիճակի չի եղել ճանաչելու այս կառույցի «անկախությունը»: Թեեւ տարբեր ժամանակներում Հայաստանի օրակարգի խնդիր էր դարձել Ղարաբաղի «անկախության» ճանաչման անհրաժեշտությունը, բայց ապարդյուն: Օրինակ, ըստ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ղարաբաղի «անկախությունը» ճանաչելու դեպքում Հայաստանը հայտնվելու էր օկուպանտ պետության կարգավիճակում: Այդ իսկ պատճառով Տեր-Պետրոսյանը ձգտում էր, որ Ղարաբաղի հիմնահարցում Հայաստանը կողմ չլինի: Տեր-Պետրոսյանից հետո իշխանության եկած ղարաբաղյան կլանին նույնպես չհաջողվեց հասնել Հայաստանում Ղարաբաղի «անկախության» ճանաչման»:**

**Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում հրավիրված ԵԱՀԿ գագաթաժողովը Ղարաբաղի առնչությամբ չընդունեց հայկական եւ ադրբեջանական կողմերին գոհացնող որոշումներ, ինչը տարածաշրջանում սրում է լարվածությունը: Ադրբեջանում վերստին օրակարգ մտավ հակամարտությունը ռազմական տարբերակով լուծելու հարցը, քանի որ Աստանայի գագաթաժողովը չարդարացրեց նաեւ օկուպացված տարածքների ազատման վերաբերյալ Ադրբեջանի ակնկալիքները:**

**Թերեւս այդ առումով պատահական չէին Ադրբեջանի Միլի մեջլիսի փոխնախագահ Զիաֆեթ Ասկերովի հայտարարությունները. «Մենք դեռեւս մեզ ենք վերապահում մեր տարածքների վերադարձման իրավունքը: Ադրբեջանը տիրապետում է իր իրավունքները պաշտպանելու բոլոր միջոցներին եւ դա ցույց կտա առաջիկա ամիսներին: Սարգսյանի հետ զրուցելու ժամանակ չունենք»: Նրա ասածները տեղիք տվեցին պատերազմի մոտալուտ վերսկսման մեկնաբանություններին: Մինչ այդ պատերազմ սկսելու դեպքում Ղարաբաղի հիմնահարցն արմատապես լուծելու եւ Ադրբեջանի օկուպացիան ընդարձակելու սպառնալիքներով հանդես եկող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, հաշվի առնելով միջազգային հակազդեցությունը, այս անգամ ասաց, որ եթե Ադրբեջանը ռազմական գործողությունների դիմի, ապա Հայաստանը կճանաչի Ղարաբաղի Հանրապետության անկախությունը:**

**Սարգսյանի այս հայտարարությունը զուգորդվում էր ՀՀ ԱԺ-ում Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ճանաչելու վերաբերյալ օրինագծի քննարկումներով, որը դեռեւս հոկտեմբերի 5-ին օրակարգ էր մտցրել ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությունը: 131-տեղանոց խորհրդարանում օրինագծի օգտին քվեարկեց ընդամենը 13 պատգամավոր, եւ դա մերժվեց: Կառավարող կոալիցիայի անդամ 3 կուսակցությունները պատճառաբանելով, թե կվնասի Ղարաբաղյան խաղաղ կարգավորման բանակցություններին եւ տարածաշրջանում կսրի լարվածությունը, հակադրվեցին օրինագծին: Թեեւ օրինագծին առերեւույթ հակադրվում է նաեւ Հայ հեղափոխական դաշնակցությունը, սակայն իրականում կողմնակից է, որ Հայաստանը նախքան նոր պատերազմը ճանաչի Ղարաբաղի «անկախությունը»: Այդ առումով հատկանշական է Հայաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանի խոսքը: Նրա կարծիքով, Ադրբեջանը պատերազմական գործողությունների կանցնի, հենց որ պատրաստ կլինի, իսկ պատերազմի վերսկսման դեպքում արդեն ուշ է լինելու Ղարաբաղի անկախության ճանաչումը. Հայաստանը, ճանաչելով անկախությունը, պետք է ցույց տա, որ Ղարաբաղի երաշխավորն է եւ դրանով կանխի պատերազմը»:**


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2011թ. կարիքներն ապահովելու համար տպագրական աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ կենտրոնական բանկի 2011թ. կարիքներն ապահովելու նպատակով տպագրական աշխատանքներ իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2011թ. հունվարի 14-ը ժամը 16-00-ն:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2011թ. հունվարի 18-ը ժամը 16-00-ն:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2011թ. հունվարի 21-ին ժամը 16-00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Հասարակայնության հետ կապերի ծառայություն

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

բնակարան, ընդ. մակերեսը՝ 50.4 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, 2 միկրոշրջան, շենք 15 (Մոլդովական փող., շենք 48/1), բն. 53:Մեկն. գինը՝ 12250000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով, ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 17.01.2011թ-ից մինչեւ 01.06.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00 - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00 – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հ./Դ. Գ. Հ. Ա ՊՁ Բ-08/21» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում Արմավիրի մարզի թիվ 8-րդ հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային գույքի գնման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել ԹԶԸ հայաստանյան բանկի 16009010214800 հաշվարկային հաշվին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Աբովյան 182: Դիմել Ժ. Բարսեղյանին, հեռ. 023722060:

Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 11.00-ն:


## Լեհ ոստիկանը տուգանեց իրեն

Լեհ ոստիկան Անջեյ Տիմանովսկին տուգանել է ինքն իրեն, հաղորդում է Metro թերթը: Ոստիկանի խոսքերով, ինքն այդպես է վարվել տուգանվածների օրական նորմայի հետ կապված ղեկավարության կարգադրությունը կատարելու համար:

«Ես չէի ուզում պատասխանատվության ենթարկել օրենսդրության գործող նորմերը չխախտած որեւէ մեկին: Ուստի նորման կատարելու համար կանգնեցի երկաթգծի վրա, իսկ հետո ինքս ինձ տուգանեցի», պատմել է լեհ ոստիկանը: Տուգանքի գումարը կազմել է 6 եվրո:

Լեհական Fakt.pl էլեկտրոնային հրատարակությունը նշում է, որ երկրի ոստիկանության ղեկավարները դեմ չեն իրենց ենթակաների նմանօրինակ արարքներին: Ավելին, ոստիկանության ղեկավարությունը ոստիկաններին նույնիսկ խորհուրդ է տվել տուգանել միմյանց:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝14.12.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: